



# ՎԵՐ. ՏԻԳՐԱՆ Ճ. ԽՐԼՈՐԵԱՆ

(1891-1968)

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ

1.

Եթէ ապրէր՝ հիմա տարիով մը ետին ձգած պիտի ըլլար ծընընդեան իր հարիւրամեակը: Եթէ ապրէր՝ այժմ կեանքի իր օրերուն վրան աւելցուցած պիտի ըլլար քառորդ դար մը եւս: Արդարեւ՝ գրեթէ քառորդ դար մը եղաւ անոր անվերադարձ մեկնումին, ու տակաւին կան մարդեր՝ որոնք կը յիշեն զայն ի ժամու եւ ի տարածամու:

Կը յիշեն, կը խօսին անոր մասին, մերթ յարգանքի ու սիրոյ քանի մը խօսք դուրս կու տան իրենց շրթներէն, ու երբեմն՝ հին ուսանողի ու բարեկամի իրենց բառ ու բանին կ'ընդխառնեն քանի մը շեշտ զուարթախոհութեան: Այսուհանդերձ՝ անոնց բոլորն ալ զայն կը յիշեն բարութեամբ, գուրգուրանքով եւ ակնածանքով, որովհետեւ իրենց համար անիկա մի'շտ ալ եղաւ Պատուելին, գլխազիր ու ընդգծուած Պատուելին, որուն խօսքն ունէր կշիռ, եւ հեռահաս դատողութիւն՝ բովանդակութիւնն այդ խօսքին, որուն ժպիտն էր անզորրը ծիածանին, եւ աչքերուն նայուածքը՝ խորերը, շա'տ խորերը թափանցող ճառագայթը միտքին, հոգիին ու սիրտին: «Յաւիտենական երիտասարդն էր Պատուելին, համակ խանդ ու եռանդ<sup>(1)</sup>: Իր յաղթանդամ ու պատկառազու արտաքինը, անկնճիռ դէմքը եւ անսովոր փայլք մը ճառագայթող աչքերը մեղի կը յիշեցնէին մշտադաւար կաղնին, որ ստեղծուած է տոկալու բոլոր անակնկալներու դէմ եւ իր հովանիին տակ պաշտպանելու նորարոյս թուփերը: Ծիշդ այսպէս, ու երբեք տարբեր չէր զգար ոեւէ մէկը, որ, դպրոցի բակին մէջ

կամ դուրսը, յանկարծ կը զգար անոր ծանր ձեռքը իր ուսին, ու կը լը-  
սէր անոր առողջ ու խանդավառ ձայնը: Եւ միշտ բան մը ունէր ըսելիք  
Պատուելին, թելադրութիւն մը, դիտողութիւն մը, երբեմն քաջալե-  
րական խօսք մը կամ խրատ մը, ու կը քալէր կ'երթար, վերջին ան-  
գամ մը եւս ուսիդ վրայ զգացնելով իր ձեռքին ծանրութիւնը»<sup>(2)</sup>:

Ճի'շդ էր Քասունին ուսանողի իր յուշերուն մէջ: Պատուելին  
մի'շտ ալ բան մը ունէր ըսելիք, թելադրելիք եւ հաղորդելիք: Ունէր  
եւ ունեցա՛ւ, ու երբեք իրեն չպահեց իր խօսքը, իր ըսելիքը: «Ոյժ ու-  
նէին անոր խօսքն ու գրիչը»՝ պիտի հաստատէր իր մտերիմ բարե-  
կամներէն մէկը յետագային. «Հայկական տաքուկ ոգիով ջերմացած  
ոյժ մը, որ միացած անոր ժպիտին՝ խանդավառութիւն կը ստեղծէր  
ու կ'առինքնէր իր ունկնդիրներն ու ընթերցողները»<sup>(3)</sup>, որոնք, ա-  
մէն բանէ առաջ, մի'շտ ալ փորձեցին իրմէ ներս տեսնել հայ մարդը,  
հայ մտաւորականը, հայ ուսուցիչը, եւ մանաւանդ՝ հայ բարեկամը,  
փորձեցին՝ սակայն հազի՛ւ թէ եղան զայն ճանչնալու պէս, փորձե-  
ցին՝ սակայն անոնց երբեք ալ շտրուեցաւ իջնել խորն անոր հոգիին,  
յառաջանալ բաւիղներէն ներս անոր ներքին մեհեաններուն, գտնել  
ինչ որ պահ էր դրուած անոնցմէ ներս եւ բերել լոյսին, որովհետեւ,  
հակառակ ոմանց ճիգին ու փափաքին, անոնցը չանցաւ ծանօթութեան  
մը սահմաններէն անդին, իսկ այդ ծանօթութիւնը մի'շտ ալ մնաց  
սահմանափակուած՝ ծուռ կամ ուղիղ բազմաթիւ սահմանադժուամե-  
րով, եւ քիչեր, իսկապէս շա՛տ քիչեր գիտցան, թէ անիկա «ազնուա-  
կան, խոնարհութեան եւ մտաւորական պարկեշտութեան ներշնչող եւ  
հետզհետէ քիչ աչքի հանդիպող բազմակողմանի մշակ մըն էր: Հովիւ,  
ուսուցիչ, խմբագիր, հեղինակ, պատմագիր, բանասէր — շարունակ  
աշխատող, խանդավառ, լաւատես, հոգիներու եւ միտքերու մշակ էր  
— մշակոյթի մարդ: Իր կոչումին գիտակից եւ գործին հաւատարիմ  
Աստուծոյ ծառայ մը»<sup>(4)</sup>: Աւելին՝ «տիպար եւ առաքինի մարդ, իր  
հոգեւոր կոչումին գիտակից անձնդիր հովիւ, խիզախ եւ ճշմարտա-  
խօս բեմբասաց, մաքուր եւ անկաշառ հայրենասէր, բարեգործութեան  
եւ քարեգործականի հաւատաւոր հետեւորդ»<sup>(5)</sup>, վերջապէս անձնուէր  
ու գիտակից կրթական մշակ՝ ահա՛ ցցուն յատկանիշները մարդու  
մը»<sup>(6)</sup>, որ Պատուելին էր: Կան տակաւին ուրիշներ, որոնք անսա-  
կարկ կերպով կը յայտարարեն, թէ մեծ էր անիկա եւ «բազմալատասակ  
մշակ [մը]... որ ընտրած էր տառապանքի, անտեսումի ճանապարհը՝  
դաստիարակի ուղին:

«Անոր մեծութիւնը մասնակիէն, ժամանակաւորէն անդին  
տեսնելն ու համոզուած մարդու կորովով իր տեսակէտները պաշա-  
պանելն էր անշուշտ՝ ամբողջ կէս դար եւ աւելի:

«Իր մեծութիւնը խոր գիտելիքներ ամբարեւուն մէջ չէր այն-

քան՝ որքան իր ունեցածը նորոգուած եւ թարմ վիճակի մէջ, կենդանի ոճով մը աշակերտներուն փոխանցելուն մէջ:

«Անոր մեծութիւնը իր ունեցածը ամբողջութեամբ տալ կարենալու որոշումին մէջ է [ը]: Եթէ մեծ մասնագէտ մը չեղաւ՝ սակայն բացատրեց եւ սիրցուց մատենագիրները իր շրջապատէն ներս:

«Եթէ մեծ պատմաբան մը չեղաւ՝ սակայն աշակերտին առջեւ դրաւ մեծութիւններու սքանչելի վաստակը:

«Եթէ մեծ քարոզիչ մը չեղաւ՝ սակայն գործնական կեանքի մէջ խղճի տէր ըլլալը թելադրեց: Ու ան ցանց բուռ-բուռ, ցանց ո՛չ թէ աշնան մը բերքին լոկ սպասելով՝ այլ սերունդի մը գոյատեւման հընարաւորութեան ուժեղացումը տեսնելու հեռանկարով»<sup>(7)</sup>:

Բաղդատականներու սա շարքէն անդին մնաց մէկ ճշմարտութիւն սակայն: Վերապատուելին հաւատաց մարդկային արժէքներուն, եւ երբեք մտահան չըրաւ, որ անհրաժեշտ էր լոյսին հանել այդ արժէքները, այսինքն, ինչպէս որ կը վկայէ իր ժամանակակիցներէն եւ հասակակիցներէն մէկը՝ «որպէս ուսուցիչ եւ որպէս հոգեւոր գործիչ՝ անոր կեանքին նպատակն եղաւ մարդ կերտել, հայ մարդ պատրաստել: Ու յաջողեցաւ»<sup>(8)</sup>, որովհետեւ «եթէ զրի առնուէին իր ամբողջական քարոզները, դասախօսութիւնները, բանախօսութիւնները, ամուսնութեանց առիթով իր խրատականները ընտանեկան բոյնի կազմութեան շուրջ՝ անոնք անկորնչելի [եւ] պատկառազու հատորներ պիտի կազմէին իր արտադրած գրութիւններուն հետ: Բարոյական արժէքներու մեծ վարդապետ էր Վեր. Տիգրան Խրչրեան [ը]»<sup>(9)</sup>, ահա թէ ինչ ո՞ւ համար իր ժամանակակիցներէն ոմանք իրմէ ներս տեսան «հոնոր քարոզիչ մը Աստուծոյ խօսքին եւ քաջակորով հովիւ մը,

«նոր սերունդին քրիստոնէական եւ տոհմային դաստիարակութեան նուիրուած կրթական մշակ մը, հմայիչ դասախօս մը, հմուտ խմբագիր մը եւ հեղինակ [մը, եւ]

«... Անվերապահ եւ անշահախնդիր հայրենասէր մը, նոյն տեն ընտանիքի գորովագութ հայր [մը], համակրելի ազգական [մը], անկեղծ բարեկամ [մը] եւ հաճելի դրացի [մը]», որ ունէր «տեսիլք եւ հաւատք, համոզում եւ վճռակամութիւն, անաչառ դատողութիւն եւ քաջութիւն, գուրգուրանք եւ նուիրում, եւ ազնուականութիւն:

«Քաջութեան եւ անվեհեր հոգիի ապացոյցները տուաւ ան առաւելարար Այնթապի հերոսամարտին եւ Սանճազի պարպումին տեսնելով: Սանճազէն հեռացող վերջին առաջնորդը հանդիսացաւ ան»<sup>(10)</sup>:

Իրաւ էր վերջին սա հաստատումն այդքան՝ որքան որ իրաւ էր առաջինը: Արդարեւ՝ 1 Ապրիլ 1920-ին Այնթապի մէջ բռնկած հայ-

թրքական բախումները յառաջ քաշեցին նաև Պատուելին: Ուսուցիչ էր այն ատեն եւ դասարանի մէջ: «1920 Ապրիլ 1, Հինգշաբթի օր... լսուեցաւ սուր պայթիւնը փամփուշտի մը... փակուած էր ելքի դուռը: Մեր խիզախ դասատուն, Պր. Տ. Խրլորեան[ը], կոնակը փակ դրան տուած եւ երկու թեւերը պարզած՝ կ'որոտար:

«— Դուրս ելլել բացարձակ կերպով արգելուած է:

«Եւ երբ այդ բռնորդ կ'արտասանէր՝ կարծես աչքերէն կրակ կը ժայթքէր:

«Արթուն հովիւ: Ան կը դողար մեր կեանքերուն վրայ...»<sup>(11)</sup>:

Վկայութիւնը կու գայ Պատուելին նախկին աշակերտներէն՝ Ասատուր Գազանճեանէն:

Մարդը եւ հայը՝ առաջին իսկ հերթին: Սակայն աստուածայնօնը՝ պիտի հարց տային ոմանք: Սակայն Պատուելին մի'շտ ալ հաւատաց թէ անոնցմէ ներս առկայ էր անիկա, թէ կարելի չէր, եւ ոչ ալ անպայման անհրաժեշտ, որոնել, դուրսէն փնտռել բան մը որ ներսն էր արդէն: Հո'ն էր աստուածայինը, հո'ն էր ազնիւր եւ հոն՝ դրականը, խոնարհը, պարկեշտը, էականը, խորհրդաւորն ու սքանչելին, ահա թէ ինչո՞ւ համար մարդը, եւ անոր հետ հա'յր նաեւ, արարեալի իրենց վէմէն կը կենային մատ մը վեր, ոչ՝ գլո'ւխ մը բարձր, եւ անմիջական մօտիկը իրենց Արարիչին: Պատուելին այսպէս ճանչցաւ մարդը, եւ անոր հետ՝ հա'յր նաեւ, ու երբ որեւէ առիթով ինքզինք գտաւ անօրինակութեանն առջեւ մարդկային բնութեան եւ բնաւորութեան՝ տխրօրէն ժպտեցաւ մեկուսի ու մնաց լուռ, եւ երբեք ալ չհարցուց ոեւէ մէկուն, թէ ինչո՞ւ էր այդպէս՝ շա'տ լաւ գիտնալով որ կեանքին ընթացքն էր որ պիտի մարդն ընէր անհատ, անհատը՝ հայ, եւ հայը՝ տէրն իր հողին ու պատմութեան, գիրին ու մշակոյթին, հոգիին եւ իմացական արժէքներուն, հոգեկան ու բարոյական սկզբունքներուն, եւ մանաւանդ՝ իր ճակատագիրին, եւ այս մէկը՝ հակառակ որ, Վեր. Ահարոնեանին իսկ հաստատումով, Պատուելին «կը պատկանի սերունդի մը, որ դժբախտութիւնը ունեցած է ապրելու մեր պատմութեան ամենէն դաժան շրջաններէն մէկուն մէջ: Որպէս երիտասարդ՝ ան ականատես եղած է մեր անազորոյն հակառակորդին ցեղասպանութեան ծրագրին անարգ գործադրութեան: Ան տեսած է մեր դարաւոր Եկեղեցիներու [ն] քանդումը, անհամար վարժարաններու [ն] հրկիզումը, մեր մշակոյթի օրկաններուն փլուզումը, հազարաւոր ու տասնեակ հազարաւոր ընտանիքներու [ն] ու հայրենակիցներու [ն] տեղահան ու աստանդական զանգուածները, եւ մեր ազգային ամբողջական կառոյցին աւերակները: Եւ ան, հազիւ ճողոպրած մահուան ճիրաններէն ու արհաւիրքէն՝ ինքզինք բոլորանուէր

կ'ընծայէ ազգային վերականգնումի գործին՝ ուխտելով սէր առ Աստուած, եւ սէր՝ Հայ ազգին:

«... Ան իր ինքնուրոյն պերճախօսութեամբ ու հրահրով սիրւած ու գնահատուած քարոզիչն էր: Ան համոզուած էր թէ ազգային վերականգնումի առաջին պայմանն էր հոգեւոր վերականգնումը. առանց հոգեւոր վերականգնումի ուրիշ տեսակ վերականգնում կարելի չէր:

«Վեր. Տ. Խրլորեան իր ուսուցչական եւ քրիստոնէական ծառայութիւնը ի սպաս դրաւ ազգային վերականգնումի: Որպէս Հայ գրականութեան, Հայ լեզուի, Հայ մշակոյթի դասախօս՝ ան վեր կ'առնէր այն արժէքները որ [ոնք] մեզ որպէս ազգ կանգուն պահած էին եւ կրնան պահել: Ան սիրահարն էր Հայ գրականութեան եւ Հայ պատմութեան եւ լեզուի [ն]...»:

«Որպէս խմբագիր եւ հրատարակագիր՝ Վեր. Տ. Խրլորեան ազդու արտայայտութեամբ վեր կ'առնէր կրօնական, բարոյական, ընկերային եւ ազգային հրատապ հարցերը առանց քաշուելու քննադատելու ինչ որ պախարակելի էր եւ քաջարար ցոյց տալու ճշմարտութիւնը եւ ազգօգուտը առանց աջ կամ ձախ թեքելու:

«Վեր. Տ. Խրլորեան, Վեր. [Եղիա] Քասունիի կողքին, Հայ Աւետ[արանական] Շարժման պատմաբանը եւ օրէնսգէտն էր: Ան արտադրած է Հուճճ եւ Ոսկեմատեան արժէքաւոր երկու հատորները, ուր Հայ Աւետ[արանական] Շարժման հիմնական պատմագիծերը ի յայտ կու գան իրենց հարազատ գոյներով: Ան ունէր տակաւին շատ բան այս ուղղութեամբ գրի առնելու եւ տալու Հայ ազգին»<sup>(13)</sup>:

2.

Իրաւ է Վեր. Յովհաննէս Ահարոնեանն իր հաստատումներուն մէջ, սակայն ոչ-ամբողջական՝ ոչ թէ Պատուելիին գրելիքներուն հաշուոյն, որոնք այդպէ՛ս ալ չգրուեցան երբեք, այլ նոյնիսկ՝ գրածներուն եւ հրատարակածներուն, ահա թէ ինչո՛ւ համար այժմ անհրաժեշտ կը նկատեմ հոս տալ կարգ մը տուեալներ՝ ամբողջական ընծայելու համար գէթ հեղինակային, գրական, պատմագրական եւ խմբագրական դիմագիծը Վեր. Տիգրան Խրլորեանին: Իրականութեան մէջ՝ Պատուելիին գրական, պատմագրական եւ հրատարակագրական կեանքն սկսաւ շատ աւելի առաջ քան հրատարակութիւնը Հուճճըին, որ Հայ ընթերցողի սեղանին հասաւ 1948-ին եւ Ոսկեմատեանի զոյգ հատորներուն, որոնք կիւթեմպերկի գլանէն անցան միայն 1950-ին եւ 1951-ին յաջորդաբար: Այս երկու գործերէն առաջ կային գրիչի, միտքի եւ սիրտի այլ գործեր եւս, որոնք, ըստ Պատուելիին մտերիմ-

ներէն՝ Հալէպի Կրթասիրաց Վարժարաններու երկարամեայ տնօրէն Գրիգոր Պողարեանի՝ կը ներկայացնէին այլ պատկեր: «Բացի Նոր Աւետարեղէն, որ Սուրիա-Լիբանանի Հայ Աւետ[արանական] Միութեան պաշտօնաթերթն էր եւ կը հրատարակուէր Հալէպ»՝ կը գրէ անիկա, Վեր. Խրչորեան խմբագրած է հետեւեալ գիրքերը. —

«1. Հունճֆը (1947)<sup>(14)</sup>, յորեկենական հատոր մը՝ նուիրուած Փրոֆ. Լեւոն Լեւոնեանի<sup>(15)</sup>;

«2. Ոսկեմատեան (1950 եւ 1951), երկու ծաւալուն հատորներ՝ նուիրուած Հայ Աւետ[արանական] Եկեղեցիի հաստատման հարիւրամեակին, որպէս Պատմութիւն Հայ Աւետ[արանական] Շարժման (1846-1946):

«3. Աւետարեք Մատեմաշար (1949-1950), չորս պրակ, որպէս պարբերաթերթ»<sup>(16)</sup>:

Պողարեանը ոչ մէկ բան կը խօսի Նոր Աւետարեքի մասին՝ բացի էջատակի փոքր ծանօթագրութիւնէ մը, որուն համաձայն՝ անիկա «Հայերէն եւ Հայատառ թրքերէն բաժիններ ունէր: Լոյս տեսած է 1927էն 1934, որպէս կիսամսեայ հանդէս»<sup>(17)</sup>: Այլ աղբիւր մը, իր կարգին, կու տայ աւելի մանրամասնութիւններ այս երկշաբաթաթերթին մասին: Ըստ անոր՝ «Նոր Աւետարեք: Կրօնաբարոյական, կրթական, գիտական երկշաբաթաթերթ [էր]: Հրատարակութիւն՝ Հայ Աւետարանական Միութեան, Հալէպ: 1927-1934: Հալէպ, Ա. տարի, Ա. թիւը լոյս տեսած է 1927 Նոյեմբեր 5ին: 16-20 էջ, 25 × 19 սմ.: Տպ. «Գոլէճ»: Արտօնատէր՝ Վեր. Կարապետ Յ. Յարութիւնեան, պատասխանատու՝ տնօրէն՝ Տիգրան Ժ. Խրչորեան: 1934-ի ամառը, արտօնատիրոջ մահէն ետք, թերթն ալ կը դադրի:

«Ե. տարուան — 1932, միացեալ թիւ 22, 23 եւ 24 խմբագրականէն կը տեղեկանանք որ թերթին հրատարակութենէն տարի մը ետք, (1928) Հայերէնին միացած է Հայատառ թրքերէն բաժին մըն ալ, 8 էջ»<sup>(18)</sup>:

Ըստ այս աղբիւրին՝ Պատուելին պատասխանատու տնօրէնն էր երկշաբաթաթերթին, մինչդեռ պարբերաթերթի ճակատին արձանագրուած կը գտնենք «պատասխանատու խմբագիր՝ Տ. Ժ. Խրչորեան»: Ըստ կարգ մը տուեալներու՝ Հայերէն թէ Հայատառ թրքերէն՝ Նոր Աւետարեքն իր առաջին տարին լոյս տեսաւ 26 թիւ, 1929-1933 տարիներուն՝ տարեկան 24 թիւ, իսկ 1934-ին՝ միայն 11 թիւ, եւ ապա դադրեցաւ<sup>(19)</sup>:

Նոր Աւետարեքի<sup>(20)</sup> հրատարակութենէն քանի մը տարի ետք, սակայն, Պատուելին լոյսին տուաւ իր Բարոյավէպերը<sup>(21)</sup>, որպէս առաջին թիւը նորահաստատ Նոր Աւետարեք մատենաշարին, որ, այդպէս ալ, չունեցաւ իր շարունակութիւնը, գուցէ անոր համար որ

Պատուելիին խմբագրական աշխատանքները եւ կրօնական պարտաւորութիւնները շատ ալ ժամանակ չձգեցին իրեն զբաղելու համար գործով մը, որուն ամբողջական հաւատացող մը մնաց անիկա կեանքին իր բոլոր տեսողութեան: Ապա պէտք չէ մտահան ընել Երեսուցական թուականներուն Հալէպի մէջ տիրող աւետարական եւ համայնքային թոհուրօհը, որուն ընթացքին կատարելի բազմաթիւ բաներ տրուեցան ճոռացութեան: Իսկ պէտք չէ մոռնալ նաեւ, որ հակառակ որ չհարունակուեցաւ նոր Աւետարեք ժատենաշարը՝ սակայն Պատուելին չկասեցաւ գրելէ, խմբագրելէ եւ հրատարակելէ: Իրաւ ալ՝ այս շրջանին կարելի է Պատուելիին ստորագրութեան հանդիպել նիւ Ենթի Հայաստանի Կոչնակին, Հալէպի Եփրատին եւ Պէյրութի Զաւաւէրին մէջ:

Քսանիինգամեայ Հունձէրն, սակայն, ունեցաւ բոլորովին այլ բնոյթ, եւ գուցէ անիկա եղաւ առաջիններէն հայ իրականութեան մէջ գնահատանքի արժանի նկատուած անձի մը ողջութեանն իսկ անոր կեանքին ու գործին նուիրուած իրր հատոր: Արդարեւ, ինչպէս Պատուելին կը գրէր անոր յոռաշարանին մէջ, «Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետ[արանական] Եկեղեցիներու Միութիւնը, 1946-ի ամառը տեղի ունեցող իր տարեկան ժողովին մէջ, նկատի առնելով Փրոֆ. Լ. Յ. Լեւոնեանի իրր նուիրեալ երկարամեայ քրիստոնէական գործիչ, եւ մանաւանդ իրր քսանհինգամեայ մեծարդիւն աստուածաբանական ուսուցիչ գնահատելի ծառայութիւնները, որոշեց յորելեանը հանդիսաւորապէս տօնել Միութեան անունով եւ հովանաւորութեամբ, եւ անմիջապէս առ այդ ծրագիր մը մշակելու եւ գայն գործադրելու համար ընտրեց... [մարմին մը]: Այս մարմինը<sup>(22)</sup> Միութեան Վարիչ Մարմինին հաւանութեան ենթարկեց իր ծրագիրը, որ կը բովանդակէր.—

«ա. Յորելեանական հանդիսութիւններ,

«բ. Լեւոնեան Ուսանողական Հիմնադրամի գոյացում, [եւ]

«գ. Յորելեանական հատորի մը հրատարակութիւն:

«...Յորելեանական հատորին թելադրուած նախնական ծաւալը ստիպուեցանք բաւական ընդարձակել, եւ տպագրութեան շրջանն ալ երկարել, որպէսզի աշխատակցիլ փափաքող սաներու կարենանք գոհացում տալ<sup>(23)</sup>»:

«Գիտակից ենք թէ գործս անթերի չէ: Անոր առաջին մասը, մանաւանդ, հապճեպով կատարուեցաւ, որպէս [զի] հերու ամառուան սկիզբը «Հունձէր» [ն] հրատարակուի»<sup>(24)</sup>:

Հակառակ թերութիւններու այս գիտակցութեան՝ խմբագիր Պատուելին Հունձէրն բաժնեց քանի մը մասի, որոնց առաջինն եղաւ ակնարկ մը Մերձաւոր Արեւելքի մէջ գոյութեան կոչուած աստուա-

ծարանական հաստատութիւններու՝ եւ կրեց «Ներածական» ընդհանուր խորագիրէն ետք՝ «Աւետ[արանական] Աս[տուա]ծարանական Հաստատութիւններ Մերձաւոր Արեւելքի մէջ»՝ ենթախորագիրը: Այս հաստատումով տալէ ետք ընդհանուր ակնարկ մը ուսումին եւ հին ու նոր դպրոցներուն մասին՝ գուցէ առաջին անգամն ըլլալով էր որ Պատուելին իրարայաջորդ կերպով լուսարձակի տակ առաւ Աւետարանական աստուածարանական ճեմարաններն ու վարժարանները<sup>(25)</sup>:

Հատորին երկրորդ մասն ընդգրկեց աշխատակցութիւնները, յօդուածները եւ ուսումնասիրութիւնները կրօնական եւ աշխարհիկ տասնեօթը աշխատակիցի<sup>(26)</sup>, որոնցմով հեղինակները քննարկեցին կրօնական եւ բանասիրական, ազգային եւ միջազգային, մարդկային եւ աստուածարանական, բարոյական եւ ընկերային հարցեր: Հատորին այս երկրորդ մասն ընդարձակագոյնն էր տրուած բոլոր հաստատումներուն եւ գուցէ ամենէն հետաքրքրականն իր այլազանութեամբ. իսկ Հուճճօրին երրորդ մասն ամբողջութեամբ յատկացուած մնաց Յորելիարին նուիրուած հանդիսութիւններուն, որոնց հիմնականը տեղի ունեցաւ 16 Մարտ 1948-ին՝ Պէյրութի Անգլո-Ամերիկեան Եկեղեցիին մէջ, ուր, որպէս ատենապետը Յորելիական Յանձնախումբին՝ Վեր. Խրլորեան կատարեց «բացման խօսքը»<sup>(27)</sup>: Այս հաստատմին մէջ, սակայն, Պատուելին գրիչին կը պատկանի ընդարձակ ուսումնասիրութիւն մը, որով անիկա կատարեց մէկ գնահատանքը Յորելիարի կեանքին ու գործին<sup>(28)</sup>: Հատորի վերջին մասով խմբագիր-հեղինակը տուաւ կենսագրականներն ու ինքնակենսագրականները Աթենքի կրօնական Վարժարանին, Պէյրութի կրօնական Գործիչներու դպրոցին եւ Պէյրութի Մերձաւոր Արեւելքի Աստուածարանական ճեմարանի շրջանաւարտներուն<sup>(29)</sup>:

Յորելիական Հուճճօրէն տարի մը ետքն էր որ Պէյրութի մէջ լոյս տեսնելու սկսաւ Աւետարեք Մատենաշարը՝ որպէս Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Հրատարակութիւն եւ որուն խմբագրական կազմի անդամներն էին Փրոֆ. Լուիթֆի Լեւոնեանը, եւ Վեր. Վեր. Յովհաննէս Արզարեանը, Յովհաննէս Ահարոնեանն ու Տիգրան Ճ. Խրլորեանը: Վերջինը պատասխանատու խմբագիրն էր պարբերագիրքին:

Վերապատուելի Տիգրան Խրլորեանի հիմնական գործն եղաւ, սակայն, հրատարակութիւնը Ոսկեմատեան ընդհանուր վերնագիրով ծանօթայն գոյգ մը հատորներուն՝ որոնց եթէ առաջինը մկրտուեցաւ Պատմութիւն Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Միութեան՝ երկրորդին տրուեցաւ Համապատկեր ժամանակակից Հայ Աւետարանական Եկեղեցւոյ խորագիրը: Ըստ գոյգ մը այս հատոր-

ներու տիտղոսաթերթերու տուեալներուն՝ Պատուելին «երկասիրեց» առաջին հատորը գործին, մինչ «պատրաստեց» երկրորդն անոր: Ինչպէ՛ս որ ալ ըլլար հեղինակութեան ձեւն անոնց՝ անոնք եղան հրատարակութիւնը Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Միութեան, լոյսին տրուեցան 1950-ին եւ 1951-ին յաջորդաբար, եւ նուիրուեցան «Հայ [աստանեայ]ց Աւետ [արանական] Եկեղեցւոյ Հաստատութեան Հարիւրամեակի [ն], 1846-1946»՝ ինչպէս կը նշէ արձանագրութիւն մը այս զոյգ հատորները բացող գունաւոր խորաններուն վրայ<sup>(30)</sup>:

Դիւրին չեղաւ այդ գործը՝ մանաւանդ որպէս ծրագրում եւ իրագործում, որովհետեւ, ինչպէս Պատուելին իսկ կը հաստատէ իր Յոռաջարանով՝ գծուած ծրագիրին համաձայն Ոսկեմատեանը պիտի առնչուէր լո՛կ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան դաշտին եւ անոր եկեղեցիներուն գործունէութեան, սակայն այլ տեղ անիկա չուշացաւ յայտնելու թէ սկզբնական երկու հարիւր էջանի գործի մը ծրագիրը 1948-ի գարնան սկիզբը երբ արդէն մամուլին էր յանձնուեր «Ոսկեմատեանի առաջին մասը»՝ անհրաժեշտ նկատուեցաւ ընդլայնել եւ կարգ մը փոփոխութիւն մտցնել անկէ ներս: Եուտով, սակայն, Ֆրանսայի Հայ Աւետարանական Ընկերութիւնն ու Միացեալ Նահանգներու Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը կազմող Արեւելեան եւ Արեւմտեան Ափերու Միութիւններն ալ ընդգրկուեցան ծրագիրէն ներս, որմէ ետք ներս առնուեցան տակաւին եկեղեցիները Եգիպտոսի, Իրանի, Կիպրոսի, Պոլսոյ եւ Հարաւային Ամերիկայի:

Ոսկեմատեանի առաջին հատորի վերջարանով խոր ու համապարփակ վերլուծում մը չէր որ կատարեց Պատուելին. ընդհակառակը, անորն եղաւ լոկ մէկ նշումը կարգ մը երեւոյթներու եւ անոնց զբսււորումին, որոնց անիկա վերահասու դարձաւ գործի ընդարձակ պատումի ընթացքին:

Ոսկեմատեանի երկրորդ հատորն ուրիշ էր սակայն՝ որպէս յղացք եւ իրագործում: «...Այս երկրորդ հատորը Համապատկեբ կոչեցինք» կը գրէ Վեր. Տիգրան Որլորեանն անոր Նախարանին մէջ, եւ նոյնհետայն կը պատճառաբանէ թէ ինք նպատակադրած էր «լրիւ ներկայացնել աշխարհի ամէն կողմը ցրուած Հայ Աւետարանականութիւնը»<sup>(31)</sup>: Իրականութեան մէջ՝ որպէս երրորդ հատոր՝ անիկա կը կրէր Համապատկեբ ժամանակակից Հայ Աւետ [արանական] Եկեղեցւոյ խորագիրը եւ կը ներկայացնէր «վիճակագրական եւ պատմական ծանօթութիւններով, կենսագրական ուրուագիծերով եւ նկարներով» հարուստ գործ մը: Այսուհանդերձ՝ հակառակ հատորին տրուած սա Համապատկեբ ստորոգումին՝ Պատուելին համար կարելի չեղաւ տալ համապարփակ գործ մը՝ պարզ այն պատճառով որ անկէ

դուրս մնացին Աւետարանական Եկեղեցիները Հայաստանին, Ազրբայճանին, Վրաստանին եւ Պուլկարիոյ, իսկ «կարգ մը պարագաներու եւ քիչ թիւով անհատ եկեղեցիներու մասին ակնկալուածէն շատ քիչ նիւթեր մեզի հասան, եւ սակաւաթիւ եկեղեցիներ ալ միայն լրօնութեամբ պատասխանեցին մեր խնդրանքներուն»<sup>132</sup> :

Ըստ թէ ուրիշ էին յղացքն ու իրագործումն այս գործին: Ըստ<sup>6</sup> սակայն թէ հիմնական երկու մասերէ բաղկացած այս հատորին առաջինով Վերապատիւ Հեղինակը տուաւ «կենսագրական ուրուագիծերը» ապրող 88 (էջ 3-81 եւ 428-433) եւ մահացած 38 (էջ 82-156) Հայ աւետարանական գործիչներու, ուրուագիծեր՝ որոնք ի՛րապէս ալ կը մնան ուրուագծային՝ հակառակ որ լուսարձակի տակ առնուող կան բազմաթիւ դէմքեր որոնք անհրաժեշտ էր որ ենթարկուէին աւելի խոր եւ ամբողջական վերբերումի, վերլուծումի եւ արժեւորումի: Յստակ է, որ գործը ժամկէտին հասցնելու արտօրանքը ի նպաստ չեղաւ Պատուելիին, եւ տրուող կենսագրական գիծերը մնացին չոր եւ յաճախ տուին անհրաժեշտը միայն, մինչդեռ, կը հաւատամ որ, աւետարանական այս 126 դէմքերու եւ գործիչներու մէջ անպայման կային, եւ կան տակաւին, բազմաթիւներ, որոնք արժանի էին աւելիին:

Համապատկերին երկրորդ մասը, սակայն, ունեցաւ առաջինէն բոլորովին տարբեր բնոյթ: Կարգ մը նկարներու օժանդակութեամբ տալէ ետք հակիրճ մէկ պատմութիւնը Մերձաւոր Արեւելքի Աւետարանական Միութեան, անոր տարեկան համաժողովներուն, Քրիստոնէական Չանից Ընկերակցութեան եւ կրօնական դաստիարակութեան համագումարներուն, եւ Հայ Աւետարանական Եկեղեցիի Հարիւրամեակի տօնակատարութիւններուն՝ Պատուելին փորձեց տալ ամփոփ մէկ պատումը աշխարհացրիւ Հայ Աւետարանական Եկեղեցիներուն եւ անոնց առնթերակից զանազան կրօնական, դաստիարակչական եւ օժանդակ կազմակերպութիւններուն եւ մարմիններուն՝ մի՛շտ ալ առատօրէն նպաստաւորուելով փաստագրային հանգամանքէն իրեն տրամադրուած լուսանկարներուն: Արդարեւ՝ Համապատկերին միայն ա՛յս բաժինին մէջ առկայ 288 էջերուն 176ը տրամադրուած են լուսանկարներու: Այս հատուածով Պատուելին փորձեց վերակազմել ընդհանուր մէկ պատկերը Հայ Աւետարանական Եկեղեցիին, որուն բընութագրումին եկան օգնելու ընդարձակ կամ հակիրճ տեղեկանքները Պէյլանի, Ալեքսանտրեթի եւ Պոլսոյ՝ վեց, Սուրիոյ՝ ութը, Լիբանանի՝ վեց, Կիպրոսի՝ երկու, Յունաստանի՝ հինգ, Եգիպտոսի՝ մէկ, Պարսկաստանի՝ ութը, Ֆրանսայի՝ քսան, Միացեալ Նահանգներու՝ քսան, եւ Հարաւային Ամերիկայի՝ երկու, ընդհանուր գումար՝ 78 մեծ ու փոքր եկեղեցիներուն: Այս բոլորին մէջ միայն Ֆրանսայի շրջանակին պատմութիւնն էր, որ այս հատորին խմբագրութեան հա-

սաւ խմբագրութեամբը Փարիզի Բանբերին<sup>(35)</sup>, մնացեալ պատումներէն ոճանք քաղուեցան ու կառուցուեցան Պատուելիին առաքուած նամակներէն եւ անոնց տուեալներով, իսկ մնացեալներն ալ՝ անոր հասցէագրուած վիճակագրական եւ ծանօթագրական թուղթերէն<sup>(36)</sup>։

Դիւրին չեղաւ աշխատանքն ա՛յս բաժինին ալ՝ ինչպէս որ անիկա դիւրին եւ հեզասահ չէր եղած առաջինին պարագային։ Հո՛ւս ալ Պատուելիին մնաց դուրս իր աշխատանքին նիւթերէն եւ գործը ներկայացուց «վիճակագրական եւ պատմական ծանօթութիւններով», եւ այնպէս՝ ինչպէս որ զանազան եկեղեցիներու առաջնորդներն ու դեկավար մարմինները կ'ուզէին որ ներկայացուած ըլլային իրենց եկեղեցիներն ու հաւաքականութիւնները։ Հո՛ւս ալ Պատուելիին չքննեց ու չքննադատեց, չդատեց ու չվերլուծեց, չխորացաւ եւ չհասաւ եզրակացութիւններու, եւ վճիռի ու վճռումի մաղէն չանցո՛ւց որեւէ եկեղեցիի գործ ու գործելակերպ։ Լո՛կ ներկայացուց զանոնք ու անցաւ։ Լա՛ւ ըրաւ այսպէս ընելով թէ՛ վատ՝ չմտահոգուեցաւ բնաւ։ Զուգե՛ց ալ գուցէ։ Որովհետեւ անիկա մի՛շտ ալ հաւատաց թէ՛ պատմութիւնն արձանագրութիւնն էր տուեալներու, վիճակներու, իրականութիւններու եւ փաստագրումի, իսկ այդ բոլորին միայն մէկ թուումն մասանցն էր որ հասեր էր իրեն, որով կարելի չէր գրել քննական պատմութիւն։ Գուցէ այս գիտակցութիւնն էր միակ պատճառը, որ մղեց Պատուելիին յայտարարելու թէ՛ ինք «պատրաստեց», լո՛կ «պատրաստեց» գործը։

«Պատրաստեց» թէ՛ «երկասիրեց», խմբագրեց թէ՛ գրեց՝ այժմ սեղանի վրայ են զոյգ մը հատորները Ոսկեմատեանին, միհատորեակը Քսանիկեանի գաւթեայ Հունձբլին, եօթը տարիներու հաւաքածոները հայերէն թէ՛ հայատառ թրքերէն՝ Նոր Աւետարհիին եւ չորս պրակները Աւետարհի Մատենաշարին, որոնք իրաւունք կու տան յայտարարելու, թէ սիրտի եւ միտքի, իմացականութեան եւ գիտութեան, ուսումնասիրութիւններու եւ վերլուծումներու մարզն եղաւ Վեր․ Տիգրան Խրչոբեանը, որուն կեանքն ամբողջութեամբ նուիրուեցաւ հայուն, հայ մարդուն, անոր պատմութեան եւ հոգ ու քարին, անոր հայրենի իրականութեան ու մշակոյթին, հոգեկան հարստութիւններուն եւ իմացական կարողութիւններուն, եւ բարոյական լինելութեան եւ Ասածոյն։ Վահէ-Վահեանի իսկ վկայութեամբ՝ «Բնութիւնը պարզեւեր էր իրեն թանկագին շնորհներ միտքի ու սիրտի։ Վեր․ Տիգրան Խրչոբեանը աճեցուց այդ շնորհները անդուլ ջանագրութեամբ եւ բնօճայարբերեց զանոնք իր շրջապատին՝ անմնացորդ նուիրումով։ Ուսուցիչ էր ինք սրտագէտ ու բանիրուն, հոգեւոր լուսամիտ ու հովիւ, հաստատ համոզումներու տէր հրապարակագիր, ազգային հասարա-

կական խանդավառ գործիչ, բնտանիքի սիրագորով հայր ու ճշմարիտ բարեկամ:

«Ազգ, հայրենիք, մշակոյթ ու եկեղեցի՝ չորս սիւներն էին գաղափարի իր տաճարին, որուն ներշնչեալ ու ներշնչող քուրմը մնաց ինք՝ մինչեւ վախճանը բազմավաստակ իր կեանքին»<sup>(35)</sup>:

3.

Բազմավաստակ ու բեղուն կեանք մը եղաւ Վեր. Տրգրան Խըր- լորեանինը, տառապանքի ու զոհողութեան կեանք մը նաեւ, եւ կեանք մը որ օր մը, հեռուոր օր մը, սկսաւ հեռուոր ալ Այնթապի մէջ, «1891-ի Հոկտեմբերի [ն] սկիզբը: Իր ուսումը կը սկսի Հալէպ<sup>(36)</sup>, ապա 1898-էն ետք, կը շարունակէ զայն Անթէպի Գայաճըզ թաղի Աւետ[արանական] Եկեղեցւոյ դպրոցը: 1907-ին կը մտնէ Անթէպի Աւետ[արանական] Գոլէճը<sup>(37)</sup>: Ուսումը տարի մը բնդհատելով՝ 1910- [19]11-ին ուսուցչութեամբ կը զբաղի վերոյիշեալ եկեղեցիի նախակրթարանին մէջ: 1913-ին գոլէճական ուսումը կ'աւարտէ<sup>(38)</sup>: 1913- [19]14-ին տնօրէն ուսուցիչ է Քիլիսի Հայ Աւետ[արանական] Եկեղեցիի նախակրթարանին [մէջ]: 1914- [19]15, ուսանող է Մարաշի Աստուածաբանական ձեւարանին մէջ: 1915- [19]18 զինուոր է, նախ մի քանի ամիս թուրք բանակին մէջ, ապա մինչեւ զինազազար իբր թարգման քարտուղար գերման բանակին մէջ<sup>(39)</sup>: 1918- [19]23, ուսուցիչ է նախ Անթէպ, ապա Հալէպ՝ 1923- [19]25, քարոզիչ-ուսուցիչ՝ Գալատուրան եւ Քեսապ: 1925- [19]27, ուսանող է Աթէնք, Կրօնական Վարժարանին մէջ: 1927- [19]34, պատասխանատու խմբագիր՝ Սուրբոյ եւ Լիբանանի Հայ Աւետ[արանական] Միութեան պաշտօնաթերթին՝ Նոր Աւետաքերի [ն], միեւնոյն ատեն օգնական հովիւ Վեր. Կ[արապետ] Թարութիւնեանի, եւ 1927- [19]28-ին ալ հին եւ նոր հայերէն լեզուի եւ գրականութեան դասախօս՝ Հալէպ Գոլէճի [ն] մէջ<sup>(40)</sup>: 1935- [19]39, հոգեւոր հովիւ Գրրըզ Խանի Հայ Աւետ[արանական] Եկեղեցիին: 1939, Հոգեգալուստի Կիրակին կը ձեռնադրուի Մերձ[աւոր] Արեւելքի Հայ Աւետ[արանական] Միութեան կողմէ Հալէպ, Էմմանուէլ Հայ Աւետ[արանական] Եկեղեցիի [ն] մէջ: 1939- [19]47, հոգեւոր հովիւ Նահատակաց Հայ Աւետ[արանական] Եկեղեցւոյ, Հալէպ: 1947-ին կը հրաւիրուի Աւետ[արանական] Միութեան հրատարակչական գործին պատասխանատուութիւնը ստանձնելու: Խմբագրած եւ հրատարակած է Հուճճը [ն], յորեկինական հատոր մը՝ նուիրուած Փրոֆ. Լ. Լեւոնեանի [ն] . խմբագրած եւ հրատարակած է 1949- [19]50-ի միջոցին Աւետաքեր մատենաշարի չորս թիւերը: Միեւնոյն ատեն հայերէն լեզուի եւ գրականութեան դասեր

տուած է Հայ Աւետ[արանական] Կրթական Հաստատութեան եւ Հայ Աւետ[արանական] Գոլէճի[ն] մէջ, Պէյրութ<sup>(41)</sup>: Ժամանակին մեծ մասը յատկացուցած է Ոսկեմատեանի երկասիրութեան եւ հրատարակութեան՝ վերջին երկու տարիներու միջոցին»<sup>(42)</sup>:

Թուումն մասանց մըն է Համապատկերինը, որ խիտ է շատ: Իրականութեան մէջ՝ ինչպէս կը յայտնէ Վեր. Տիգրան Ճ. Խրչոբեանի ծննդեան հարիւրամեակի յօրեւիճական հանդիսութեան յայտագիր մը<sup>(43)</sup> Միացեալ Նահանգներու Փաստենա քաղաքին մէջ՝ Քալիֆորնիա՝ «նա եղել է Սուրիայի եւ Լիբանանի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Սահմանադրութեան խմբագիրներէից մէկը, Աւետարանականութեան պատմութեան եւ տեսութեան հետազոտողը, վարակիչ քարոզիչը, կիրակնօրեայ դպրոցների կազմակերպիչը եւ անվերապահ ծառան Յիսուս Քրիստոսի: Նրա քարոզները համակել են ինչպէս մտաւորականին՝ այնպէս ալ աշխատաւորին, ինչպէս տարեցին՝ այնպէս ալ պատանուն: Նա ամէն կերպ ձգտել է քրիստոնէափայլ եւ համագործակցական կապեր ստեղծել բոլոր հայ յարանուանութիւնների միջեւ՝ յատուկ յարգանք վերապահելով Մայր Եկեղեցու նկատմամբ»<sup>(44)</sup>:

«Որպէս կրթական մշակ՝ Վեր. Տ. Ճ. Խրչոբեանն իր զգալի աւանդն ունի սփիւռքահայ դպրոցի կազմակերպման գործում ինչպէս Այնթէպում (1920–[19]21) այնպէս էլ Քիլիսում (1913–1914), Հալէպում (1921–1923), Ժողովրդական դպրոց (1922–1923, 1927–1934), Մանչերու Բարձրագոյն Վարժարան — Ալեքիֆո Գոլէճ —, հայախօս ասորիներու դպրոց (1929–1931), Տավուսիէ<sup>(45)</sup> թաղամասի դպրոց (1940–1942), Ուսումնասիրաց–Լեւոնեան Վարժարան (1945–1947), Քեսապի շրջանում (յատկապէս Գալատուրանում, 1923–1925), Գրբրդ–Ուանում (1934–1938) եւ Պէյրութում (Հայ Աւետարանական Գոլէճ, Ուսուցչանոց, 1947–1949): Նա հիմնադիրներից է սփիւռքի անդրանիկ համալսարանի՝ Հայկազեան Գոլէճի: Նա ուշագրաւ մանկավարժական յօդուածներ է ստորագրել ինչպէս սփիւռքահայ՝ այնպէս էլ հայրենի մամուլում:

«Որպէս հայագէտ՝ Վեր. Տ. Ճ. Խրչոբեան[ը] հետազօտել է հայ կրօնական շարժումների պատմութիւնը (հեթանոսական, Առաքելական, Պաղիկեան, Թոնդրակեան, Աւետարանական), սփիւռքահայ դպրոցի պատմութիւնը, սփիւռքի քաղաքական-մշակութային կառույցը եւ հայ գրականութեան որոշ հարցեր: Նա հիմնադիր-վարիչն է[ը] Պէյրութի Հայկազեան Գոլէճի հայագիտական ամպիոնի (1955–1968) եւ նրա հայագիտական մատենադարանի, որը կրում է նրա անունը: Նա երկար տարիներ Հալէպում եւ Պէյրութում դասաւանդել է հայագիտական նութեր՝ յատկապէս զբարար, արդի հայերէն, հա-

յոց պատմութիւն, հայ եկեղեցւոյ, դպրոցի, գրականութեան եւ մատենագիտութեան պատմութիւն: Նա մեծ հմտութեամբ ժողովրդականացրել է հայագիտութեան նորագոյն նուաճումները եւ նրա միջոցով առողջ ազգային հպարտութիւն արմատաւորուել է ժողովրդի գիտակցութեան մէջ:

«Որպէս հայ մամուլի հրատարակչական գործի երախտաւոր՝ Վեր. Տ. Ճ. Խրչորեան[ը] խմբագրել է նոր Աւետարեք (1927-1934) երկշաբաթեայ հանդէսը, Աւետարեք պարբերականը (1949-1950), եւ րազմաթիւ յօդուածներ է գրել սփիւռքահայ հայատառ եւ անգլիատառ մամուլում: 1947-1952 [թուականներին] նա եղել է Հայ Աւետարանական Միութեան հրատարակչական գործի պատասխանատուն: Նրա երկարամեայ ուսումնասիրութիւնների արդիւնքն է Ոսկեմատեան երկհատորեայ մենագրութիւնը (1950-1952): Նա մաս կազմել է Այնթափի հայոց պատմութեան նուիրուած Տոքթ. Գ. Սարաֆեանի հրատարակած Հատորների խմբագրական մարմնի<sup>(46)</sup>: Խմբագրել է Հուսնժ ժողովածուն<sup>(47)</sup> եւ Բարոյավէպեր մանկապատանեկան պատմըւածքների հաւաքածոն (1931): Մամուլում հրատարակուած նրա յօդուածները կը լցնեն մի քանի ստուար Հատորներ: Նրա հրատարակումներն աչքի են ընկել իրենց արտայայտած գաղափարների ինքնատիպութեամբ, նորութեամբ, խորութեամբ, ազգային խորքով ու քրիստոնէական ոգով: Նրա ոճը պարզ է, ազդու, լակոնական եւ հիւսթեղ:

«Որպէս հասարակական գործիչ՝ Վեր. Տ. Ճ. Խրչորեանի կարգաթուր եղել է «Յանուն Քրիստոսի, ազգի, եւ մարդկութեան»<sup>(48)</sup>: Նա գործոն կերպով մասնակցել է բռնագաղթուած գաղթականների [ն] օգնելու գործին եւ Սուրիայի գաղութի կազմակերպման, Այնթափի ինքնապաշտպանութեան պայքարին, Սանճագի հայութեան դատի [ն]<sup>(49)</sup> եւ հայ պահանջատիրութեան պաշտպանութեան, հայ քաղաքական կեանքում միասնութեան հաստատման<sup>(50)</sup>, սփիւռք-հայրենիք կապերի ամրապնդման<sup>(51)</sup>, ներգաղթի կազմակերպման<sup>(52)</sup> եւ հայ ժողովուրդի յարաբերութիւնները այլ ազգերի ու պետութիւնների հետ բարելաւելու գործին: Սփիւռք-հայրենիք կապերի ամրապնդման մէջ Վեր. Խրչորեան [ն] առանձնացրել է հայապահպանման, Հայաստանի ազատագրման նպատելու եւ հայ ազգին միասնութիւնը ամրապնդելու հնարաւորութիւնները<sup>(53)</sup>: Նա ներգաղթը դիտել է որպէս հակաճուլղղական, Հայաստանի հզօրացման եւ նրա ինքնուրոյնութեան հնարաւորութիւնը զօրացնող ուժ: Ներգաղթը համարել է զոհեր ենթադրող՝ բայց անհրաժեշտ գործողութիւն<sup>(54)</sup>:

«...Վերապատուելիին կեանքը եղել է մի պատարագ Աստուծոյ եւ ազգի»:

Իրա՛ւ էր, պատարագ մը եւ զոհարերում մը, կեանք մը որ լի էր տրտմութեամբ, այսուհանդերձ՝ յոյսով նաեւ: Դրական մարդն էր Պատուելին, որ սակայն մի՛շտ ալ շրջապատուած մնաց բացասական երեւոյթներովը մեր կեանքին: «Իր մեծ տրտմութիւնն էին մեր հակամարտ ընդհարումները, անխնայ մեր վատնումը ուժի եւ նիւթական միջոցներու՝ զիրար ջլատող պայքարի մէջ»՝ կ'եզրակացնէ Վահէ-Վահեանը: «Բայց չէ՛ր երբեք յոռետես՝ մեր ժողովուրդին ընաւորութեան մասին: Ան իրական դատումովը իմաստասէրի մը, մեր կեանքին տգեղ երեւոյթները կը վերագրէր մեր վտարանդի հատուածին պարտադրուած անմարդկային պայմաններուն ու կը հաւատար թէ չէին ներկայացնէր անոնք բախտորոշ գիծերը հայ նկարագիրին: Աւնէր հաստատ համոզումը թէ անոնք պիտի մաքրուէին, երբ փոխուէին մեր կեցութեան պայմանները, երբ զաղրէինք ամէն հովի ենթակայ Սփիւռք ըլլալէ:

«Մինչեւ հասնիլը երջանիկ այդ օրերուն, նուազագոյն կորուստով վերապրումի հնարաւորութիւնը կը տեսնէր փրկարար ուժին մէջ մեր մշակոյթին — լեզուին, գրականութեան, արուեստներուն եւ եկեղեցիին: Ահա թէ ինչո՞ւ նուիրեալ սպասարկուն էր ինք հայ մշակոյթին եւ տարածիչը անոր բարիքներուն<sup>(55)</sup>:

«Օրէ օր մաշող Սփիւռքի խորացուցած տրտմութեան մէջ, իր մխիթարութիւնն էր պայծառ իրականութիւնը մեր աճող ու զօրացող հայրենիքին...»<sup>(56)</sup>:

Իրաւ եւ ճի՛շդ դատում, եւ իրաւ ու ճիշդ վճիռ: Իրականութեան մէջ՝ հայրենի հող ու քարին, բառ ու բանին, ժողովուրդին ու հաւաքականութեան իրականութիւնն էր որ տարբեր ընծայեց զինք եւ յաճախ դրաւ հակադիր դիրքերու վրայ իր ժամանակակիցներէն, ու մանաւանդ՝ դասակիցներէն ու գործակիցներէն ոմանց, որոնք գտան զինք ուրիշ, մերթ աւետարանական կրօնական առաջնորդի մը անհաշտ դիրքի մը վրայ, եւ նոյնիսկ՝ երբեմն անընդունելի: Այսուհանդերձ՝ անիկա «կա՛ր երէկ, կը գտնուէր մեզի հետ, կը խօսէր բոլորին, կը ժպտէր ամենուն, կը յուսադրէր, կը խրատէր, կը վիճէր, չէր սակարկեր, չէր այպաներ, չէր քննադատեր. բարի հովիւն էր անիկա, Աւետարանին մարդը, հայութեան հաւատացողը, եւ որպէս այդպիսին՝ կ'ապրէր, կը մտածէր, կը ճշդէր, կը վստահեցնէր, կը յուսադրէր, եւ այս այսպէս՝ որովհետեւ այդպէ՛ս էր ընկալած իմաստը կեանքին, այդպէ՛ս էր հասկցած պարտաւորութիւնները, որոնք իրն էին անպայման, ու մնացին այդպէս ալ մինչեւ վերջին հեւքն իր շունչին:

«Եւ, սակայն, այդպէս չըմբռնեցին կեանքը մարդեր, այդպէս չհասկցան զինք մարդեր: Մերթ մօտեցան իրեն, երբ ի նպաստ իրենց

էր այդ քայլը: Խօսեցան իրեն հետ, երբ կրնային օգտուիլ իրմէ: Բարեւեցին, երբ շահ մը կար քաղուելիք, եւ, սակայն, բամբասեցին, երբ բացակայէր ինք: Բայց այսօր, իր մեկնումէն ետք, ահա՛ւասիկ, մեծցաւ, մեծցա՛ւ անիկա, աճեցաւ, բազմացաւ, ու դարձաւ մեծ եւ ա՛յլ հակ, մեծ եւ ուրի՛շ մարդ:

«Մահը գեղեցկացուց զինք, մեծցուց, լուսաւորեց, իմաստաւորեց, չքեղցո՛ւց նաեւ զայն, որ մերժեց պատիւները մեծութեան, փառաբանանքն իր պարտաւորութիւններուն, գովերգումն իր կատարած պարտականութիւններուն: Մշակն էր միտքի եւ սիրտի, ու սակարկեց ո՛չ մէկուն հետ կարելիութիւններն իր միտքին ու սիրտին: Քայլեց առանձին, մնաց առանձին, ու տառապեցաւ առանձի՛ն: Տուաւ ինչ որ ունէր, ինչ որ կրնար, եւ ստացաւ քիչ, շա՛տ շատ քիչ այդ բոլորին փոխան, երբ կ'ապրէր ու կը տեւէր, երբ կը քալէր կեանքի գնացքն ի վեր, եւ, սակայն, ստացաւ շատ՝ իր մեկնելէն ետք միայն:

«...եւ, սակայն, մահը գեղեցկացուց զինք, եւ նոյնհետայն դադրեցան հաշիւները, քէնները եւ նախանձները, չբացան սակարկութիւնները, փոքրացումները եւ մերժումները, քանդուեցան բաժանումները, խրամատները եւ կոտորակումները, եւ եղաւ խաղաղութիւն, եւ այդ բոլորէն ետք՝ [մարդեր] ըսին շա՛տ բան, գրեցին շա՛տ բան, խօսեցան շա՛տ բան:

«Արդարօրէն եւ իրաւացի կերպով:

«Բայց ա՛լ պէտք չունէր անոնց, որովհետեւ մահով գեղեցկացողը մա՛րդ մըն էր լոկ, որ գիտցաւ սիրել կեանքը, սիրել մարդերը, սիրել անոնց տկարութիւնները, մտահոգութիւնները, անոնց տար առօրեան, յոյսերն ու յուսախարութիւնները, եւ այդ բոլորէն վեր՝ անոնց մարդութիւնը:

«Որովհետեւ Վերապատուելի Տիգրան Խրչորեան մա՛րդ մըն էր»<sup>(57)</sup>:

Այդպէս, միա՛յն այդպէս: Մահը գեղեցկացուց մեծ մեռեալը, եւ մարդեր չտապեցին, եկան իրարու մօտ, համախմբուեցան, կազմակերպուեցան եւ կազմակերպեցին թաղումն անոր, որուն անակնկալ մահը տեղի էր ունեցեր 23 նոյեմբեր 1968-ին Շաբաթ առաւօտեան՝ իր բնակարանին մէջ<sup>(58)</sup>:

Ու երբ թարմ էր ցաւը տակաւին, եւ մարդեր գերզգայուն՝ գաղափարին եւ իրականութեան դէմ մահին ու մահացողին՝ Հայկազեան Գոլէճի տնօրէնութիւնը փութաց հաղորդելու հայ ժողովուրդին, թէ «հայ մշակոյթի երախտաւոր արժանայիշատակ Վեր. Տիգրան Ծ. Խրչորեանի յիշատակը յաւերժացնող ձեռնարկներ մշակելու համար

կազմուած է յատուկ յանձնաժողով [մը]՝ Գոլէճի նախագահ Տոքթ. Ժ[իլպեր] Պիլեգրիկեանի գլխաւորութեամբ:

«Յանձնաժողովը որոշած է՝

«1. Հրատարակել Վեր. Տիգրան Ճ. Խրչոբեանի ձօնուած նկարագրող յուշամատեան մը: Առ այդ կը խնդրուի ներքեւի հասցէով ամենակարճ ժամանակամիջոցին յանձնաժողովիս ղրկել Վեր. Տ. Ճ. Խրչոբեանին վերաբերող յուշեր, անոր կեանքին ու գործունէութեան հետ առնչութիւն ունեցող վաւերաթուղթեր ու նկարներ<sup>(99)</sup>:

«2. Կազմակերպել հայագիտական շաբաթ՝ նուիրուած Վեր. Տիգրան Ճ. Խրչոբեանի յիշատակին, 1969 թուականի Մարտ ամսուան ընթացքին:

«3. Խնդրել Վեր. Տիգրան Ճ. Խրչոբեանի յիշատակին նուիրուած ձեռնարկներուն մասնակցութիւն բերել ցանկացող բոլոր կազմակերպութիւններէն գործակցիլ կազմուած յանձնաժողովին հետ եւ ներկայացնել իրենց առաջարկները:

«4. Խնդրել բոլոր անոնցմէ, որոնք Վեր. Տիգրան Ճ. Խրչոբեանի յիշատակին Հայկազեան Գոլէճի հայագիտական մատենադարանին նուիրատուութիւններ կ'ընեն, հեռաձայնով տեղեկացնել իրենց հասցէները՝ ղիւրացնելու համար գանձումը»<sup>(100)</sup>:

Այդքան, միա՛յն այդքան: Հոն էր կոշը, հոն էր հրաւերը գործակցութեան նաեւ, սակայն այժմ կայ ոչ մէկ փաստ ցոյց տալու համար թէ կատարուեցաւ հրատարակութիւնը «նկարագրող յուշամատեան»ին, կազմակերպուեցաւ «հայագիտական շաբաթ», կամ Վեր. Տիգրան Խրչոբեանի յիշատակին նուիրուած որեւէ «ձեռնարկ»: Այդ կոշին հրատարակութենէն ետք թաւալեցաւ քառորդ դար մը եւ ոչ մէկը շարժեցաւ իր տեղէն: Գուցէ անոր համար, որ Պէյրութէն եւ Հայկազեան Գոլէճէն մեկնեցաւ «Յանձնաժողով»ին նախագահը՝ Տոքթ. Ժիլպեր Պիլեգրիկեանը, եւ իրեն հետ ալ տարաւ ամէն ինչ, ծրագրելի ամէն բան, եւ կազմակերպելի ամէն ձեռնարկ, բացի մէկ բանէ — Հայկազեան Գոլէճի հայագիտական մատենադարանի անունէն, որ հիմա կոշուեցաւ Վեր. Տիգրան Ճ. Խրչոբեանի անունով, որուն որպէս գրաւական ու փաստ՝ յուշատախտակ մը դետեղուեցաւ մատենադարանի մուտքին եւ հանգուցեալին մեծազիր նկարը՝ մուտքէն ներս:

4.

Այժմ սեղանիս վրայ կը գտնուին Միացեալ Նահանգներէն ստացուած լուսապատճէնները հայերէն եւ անգլերէն թուղթերու տրցակի մը: Անոնց հետ է նաեւ լուսապատճէնը Պատուելիին ծննդեան հարիւրամեակի նշումի յայտագիրին: Խճողուած, արդարեւ շատ խը-

ճողուած յայտագիր մըն է անիկա, որ իր խօսքի եւ արտայայտութեան, երգի ու նուագի, եւ ասմունքի ու յուշապատումի առատութեամբ տեսակ մը բողոք է բոլոր «յատուկ յանձնաժողով»ներուն եւ անոնց նախագահներուն եւ ատենապետներուն լռութեան եւ անշարժութեան դէմ նետուած: Այս թուղթերէն խօսող սիրելի բոլոր դէմքերն ալ սակայն կը կատարեն աւուր պատշաճի քանի մը խօսք եւ երէկն ու անոր պատկանող մարդերն ու գործերը կը դիտեն հետուէն: Ծիշդ է, որ յաճախ սիրտի խօսքեր են անոնցը, տաք եւ զգայուն, երբ ումանցը ընդհանրութիւններ են միայն: Այս թուղթերուն մէջ կը գտնուի խօսքը Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան վարիչ-տնօրէնին՝ Վեր. Մովսէս Պ. Ծանապահանին: Ըստ 22 Նոյեմբեր 1991 թուակիր այս թուղթին՝ «Աստուծոյ հաւատարիմ ծառայ մըն էր Վեր. Տիգրան Խրլորեանը, աւետարանական պերճախօս կրօնական մը, եւ իրաւ հայ հայրենասէր մը, որ նմանը չունեցող ծառայութիւններ մատոյց հայ հաւաքականութիւններուն՝ ընդհանրապէս, եւ Հայ Աւետարանական Եկեղեցիին՝ մասնաւորապէս: Շատ են իր աշխատանքներն ու իրագործումները նշուելու համար այսպիսի կարճ խօսքի մը ընթացքին: Աւետարանի ներշնչեալ քարոզիչ մըն էր անիկա, մեծ պատմաբան մը, բեղուն գրիչ մը, ներհուն խմբագիր մը, յարգուած բանասէր մը եւ մեծապէս գնահատուած դաստիարակ մը: Բոլոր այս գործունէութիւններուն անիկա մի՛շտ ալ ընդխառնեց իր կրքոտ սէրը հանդէպ հայ ժողովուրդին, եւ իր խոր յանձնառութիւնը հանդէպ քրիստոնէական սկզբունքներուն:

«...Վեր. Խրլորեանի հիմնական գործերէն մէկն եղաւ, որպէս հայ աւետարանական առաջնորդ, հետապնդումը իր եկեղեցիին եւ համայնքին տրուած հայկականութեան նորոգուած բովանդակութեան: Եւ այս Աւետարանական Եկեղեցիին առջեւ անիկա տեսօրէն բարձր պահեց իր յանձնառութիւնը հայ մշակոյթին եւ հոգեկան ժառանգութեան հանդէպ, բան մը որ հաւատարիմ է Հայ Աւետարանական Շարժումի սկզբնապատճառներուն: Այս մէկը նպաստեց որ սիրալիր յարաբերութիւն եւ համագործակցութիւն յառաջանային Միջին Արեւելքի Հայ Աւետարանական եւ Առաքելական Եկեղեցիներու եւ համայնքներու միջեւ:

«Վեր. Խրլորեանի մնայուն ալ գործերէն եղան յառաջմղիչ իր ճիգերը Հայկազեան Գոլէճի հաստատումի մէջ՝ Պէյրութ, Լիբանան, եւ իր կեդրոնական դերը՝ որպէս հիմնադիրն անոր Հայագիտական Ուսմանց Կեդրոնին»<sup>(61)</sup>:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անունով Դոկտ. Բերկրուհի Նաճարեանը որ շատ հին եւ սերտ զգացումներով էր կապուած Պատուելիին՝ կը գրէր իր 18 Նոյեմբեր 1991 թուակիր-

րով, թէ «ահաւասիկ անուն մը, որ իր ուրոյն տեղը ունի Միջին Արեւելքի եւ մասնաւորապէս Սուրիոյ եւ Լիբանանի հայ գաղութներու պատմութեան մէջ՝ իբրեւ անբասիր հոգեւորական, կրթական մշակ, խմբագիր, բանասէր, բայց մանաւանդ ազգային լայն տեսլականի տէր գործիչ, որուն գործունէութեան դաշտը կը տարածուէր նաեւ հայկական շրջանակէն դուրս՝ իր գտնուած հաւաքականութեան ընդհանուր բարօրութեան սատարելու իր ճիգին մէջ:

«Մեծ եղած է անոր ներդրումը Հալէպի հայ գաղութի [ն] եւ ի մասնաւորի աւետարանական համայնքի [ն] կազմակերպման մէջ: Եւ ինչ որ ամենէն բնորոշիչ գիծը եղած է իրեն համար՝ աւետարանական վարդապետութեան ներդաշնակ ընդելուզումն է հայ ազգային նկարագրի [ն] հետ, պարագայ մը՝ որ դժբախտաբար ուրիշներու մօտ նկատուած է անհամատեղելի կամ առնուազն ստորագասելի:

«Եւ երջանկայիշատակ Վերապատուելին տարբեր չէր կրնար ըլլալ, որովհետեւ անոր սիրտը կը տրոփէր իր ժողովուրդին ճակատագրով: Ահա թէ ինչո՞ւ ան իր քաջարի մասնակցութիւնը կը բերէր Այնթապի ինքնապաշտպանութեան, Ալեքսանտրեթի եւ Քեսապի հայոց իրաւունքներու պաշտպանութեան, Բ. պատերազմի աւարտին ներդաշնակ կազմակերպման, պարզապէս թուած ըլլալու համար մի քանին իր կատարածներէն:

«Բ. պատերազմէն ետք, Պէյրութի մէջ ծաւալած իր հայագիտական ու դասախօսական գործունէութիւնը նոր որակ մը սահմանուած էր բերելու գաղութահայ կեանքին, ամրապնդելով հիմերը նորահաստատ Հայկազեան Գոլէճին, որուն հայագիտական գրադարանը արժանավայել ու արդար կերպով կը կրէ անունը Վերապատուելիին»<sup>(62)</sup>:

Ըստ Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելըսի շրջանային վարչութեան ներկայացուցիչ Գէորգ Քէօշքերեանի՝ Պատուելին նմոյշն էր իրաւ հայկականութեան, մինչդեռ Միութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ Տոքթ. Քեչիշեանին իսկ խօսքերով՝ «Վերապատուելիին կեանքն ու գործը անկասկած որ պատկառելի են եւ ներշնչող՝ նորահաս սերունդներուն համար: Մեծ եղեռնէն ճողոպրած գաղթական, խուճապահար հայ խլեակները Միջին Արեւելքի արարական ասպնջական երկիրներուն մէջ պէտք էր պատսպարել, բալասանել. հարկ էր կազմակերպել նորաստեղծ հայկական գաղութները. պէտք էր հասնիլ գաղթականներու ֆիզիքական, կրթական, կրօնական եւ մշակութային կարիքներուն:

«Պատմական այդ առաքելութեան գլուխն էր ահաւասիկ Վերապատուելի Խրլորեան [ը]:

«Մենք կ'ողջունենք իր մէջ անսակարկ [եւ] հայրենասէր ա-

ոաջնորդը, լայնախոհ եւ լայնասիրտ կրօնականը, պարկեշտ եւ ճշմարիտ մտաւորականը, վաստակաւոր հասարակական գործիչը, առաքինութիւններ արդարեւ՝ առանց որոնց դադթաշխարհի հայութիւնը վազուց պիտի կորսուած ըլլար քիչ մը ամէն տեղ»<sup>(63)</sup> :

Միացեալ Նահանգներու Արեւմտեան Ափի Համազգային Մշակութային Ընկերակցութեան ներկայացուցիչ Ճորճ Արելեանին համաձայն՝ «երբ Հայաստան կը հեծէր սովետական լուծին ներքեւ, հայկական սփիւռքը կը փորձէր բալասանել հայկական ցեղասպանութենէն ստացած իր վէրքերը, եւ հայութիւնը կը տապալակէր տարբադարութեան ճիրաններուն մէջ ինկած՝ Վեր. Տիգրան Խրչոբեանը, քանի մը մտաւորականներու հետ, գործնապէս կը մասնակցէր կանգուն պահել կրօնական, մշակութային, կրթական, գրական ու քաղաքական աւանդութիւնները հայուն, եւ գործօն կերպով բաժին կը վերցնէր սփիւռքի համայնքները կազմակերպելու աշխատանքին մէջ: Յիրաւի՝ անիկա ջահակիրներէն մէկն էր հայրենասիրութեան, լուստեսութեան եւ ստեղծագործ կեանքի հանդէպ հաւատքի»:

Քալիֆորնիոյ շրջանի Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապէտ Գարրիէլ Մոլոյեանն իր կարգին հաստատեց թէ Վեր. Տիգրան Խրչոբեանը ամբողջական կերպով նուիրուած մարզն էր իր ընտանիքին եւ ժողովուրդին, հայ դպրոցին ու եկեղեցիին, եւ հայկական ազգեմական ու կրօնական կեանքի զարգացման: Մոլոյեանը Պատուելիէն ներս գտաւ տեսիլքի, մե՛ծ տեսիլքի մարզը<sup>(64)</sup> :

Միացեալ Նահանգներու Միջիկըն-Տիրպորնի Համալսարանի Հայկական Հետազօտութեան Կեդրոնի հիմնադիր, տնօրէն եւ այժմ նախագահ՝ Տենիս Փափագեանի համար Վեր. Տիգրան Խրչոբեանը անուանի հայ դաստիարակն էր, որ մանաւանդ հռչակուած էր «իր կանխատեսութեան եւ նուիրուածութեան համար՝ ինչպէս Հայկազեան Գոլէճի Հայագիտական մասնաճիւղի հաստատումին՝ նոյնպէս նաեւ անոր հայագիտական մատենադարանին, որ այժմ կը կրէ Տիգրան Խրչոբեան մատենադարան անունը:

«Մեզմէ անոնք որոնք կը պարապին դաստիարակչական գործով՝ կ'անդրադառնան թէ որքա՛ն նուրբ ու թանկագին են ուսումն ու դաստիարակութիւնն ընդհանրապէս, եւ որքա՛ն նուրբ ու թանկագին են հայկական ուսումները մասնաւորապէս: Հետեւաբար՝ ծայրաստիճան կարեւոր է ճանչնալ ու գնահատել մեր նախորդները՝ երբ մենք կը շարունակենք կատարել [դաստիարակի] մեր սրբազան պատականութիւնը:

«Անոնք գորոնք կը պատուենք՝ կ'արտայայտեն մե՛ր արժանիքներն ու նախընտրութիւնները: Պատուել Տիգրան Խրչոբեանը, ուրեմն, ամբողջական կերպով պատուել է երկար շարքը մեր մշակոյ-

թին հայ գիտնականներուն, ստեղծագործողներուն եւ սահապաններուն՝ սկսելով Մեսրոպ Մաշտոցէն հասնելու համար մեր ներկային:

«...Տիգրան Խրլորեանը ազնիւ ու կարեւոր մարդ մըն [է] հայագիտական ուսումներու անդաստանէն ներս, մէկը՝ որ իր կեանքը զոհարեց հայ ժողովուրդի դաստիարակութեան»<sup>(65)</sup>:

Մանուկ Եանկի համար որ ատենապետն է Հայկական Ուսումներու եւ Հետազոտութեան Ազգային Ընկերակցութեան վարիչ մարմինին՝ Վեր. Տիգրան Խրլորեանի կատարած հայագիտական աշխատանքը կը զօգուէր եւ անբաժանելի մէկ մասը կը կազմէր հայկական ուսումներու եւ հետազոտութիւններու համաշխարհային եւ մանաւանդ Միացեալ Նահանգներու մէջ առկայ շարժումին: Ըստ անոր՝ «Վեր. Խրլորեանի եզակի դերը Հայկազեան Գոլէճէն ներս հայկական ուսումներու յառաջմղումին մէջ պէտք է ընդունիլ որպէս մէկ մասը հայկական ուսումներու համաշխարհային շարժումին, որ արմատաւորուեցաւ ու ծաղկեցաւ այս երկրին»<sup>(66)</sup> մէջ Հայկական Ուսումներու եւ Հետազոտութիւններու Ազգային Ընկերակցութեան ջանքերով: Անոր նպաստը հայագիտութեան — գուցէ իր այլ գործերուն որեւէ մէկէն աւելի — պիտի նպաստէ սփիւռքի մէջ հայութեան անմահութեան...»<sup>(67)</sup>:

Փաստենայի մէջ կայացած հարիւրամեակի հանդիսութեան գլխաւոր բանախօսն էր Ամերիկայի Միջազգային Գոլէճի նախագահ Կարպիս Տէր Եղիայեանը, որ իր խօսքին մէջ վեր հանեց կեանքի իմաստասիրութիւնը Վեր. Տիգրան Խրլորեանին՝ այնպէս ինչպէս որ անիկա կը դրսեւորուէր անոր գործին ու մտածումներուն մէջ եւ այն պատգամը որ անոր կեանքը կը հաղորդէր արդի հայ մարդուն: Ըստ Տէր Եղիայեանին՝ Պատուելին ո՛չ միայն ջահակիրն էր ու գիտնականը որ կ'երաշխաւորէր տեւականացումը հայկական առկայ արժէքներուն՝ այլ նաեւ ստեղծագործ մարդն էր անիկա, կերտիչը նոր արժէքներու եւ զարգացնողը հայ աւանդութիւններու: Բանախօսը պնդեց թէ Վեր. Խրլորեանի կեանքին տեւողութիւնը չէր սահմանուեր անոր ապրած 78 տարիներով՝ այլ գումարովը այն տարիներուն զորոնք անիկա նուիրեց հայ եկեղեցիին, հայ դաստիարակութեան, հայ հանրային կեանքին եւ հայկական ուսումներուն: Աւելին՝ յորելինական սահանդիսութիւնը կազմակերպուած էր ոչ թէ դրուատելու համար անհատ մը՝ այլ նաեւ օգնելու մենք մեզի աւելի լաւ կեանքի մը համար մեր մղած պայքարին մէջ՝ օրինակ վերցնելով կեանքն ու միտքերը Պատուելիին: Ըստ բանախօսին՝ կար ժառանգականութեան կապ մը ընդմէջ Պէյրութի Հայկազեան Գոլէճին որուն հիմնադրութեան մէջ մեծ դեր խաղաց Վեր. Տիգրան Խրլորեանը, եւ Ամերիկահայ Միջազգային Գոլէճին: Առաջինը հանդիսացաւ ներշնչումի մեծ աղբիւր մը

ԱՄԳ-ի ղեկավարներուն, զաստիճակական կազմին, պաշտօնէութեան եւ ուսանողութեան համար<sup>(98)</sup> :

Ի վերայ այսր ամենայնի՝ յորելինական հանդիսութիւնը կազմակերպողներուն յղուած գիրով մը կարպիս Տէր Եղիայեանը կը յայտնէր տակաւին, թէ «մենք կ'ողջունենք իր մէջ նուիրեալ այն քրիստոնեան, որ զանազան երկիրներու մէջ ստանձնեց առաջնորդութիւնը բազմաթիւ եկեղեցիներու եւ անձնդիր աշխատեցաւ աշխարհի վրայ Աստուծոյ թագաւորութեան յառաջացումին :

«...Ներշնչող [այն] դաստիարակը, որ իբր տնօրէն, ուսուցիչ եւ խորհրդատու՝ ծառայեց Միջին Արեւելքի զանազան վարժարաններուն մէջ [եւ] ուր պատրաստեց հայ ղեկավարներ որպէս ապագայի առաջնորդ :

«...Փայլուն [այն] գիտնականը, որ որպէս մէկը Պէյրութի Հայկազեան Գոլէճի եւ այդ հաստատութեան մատենադարանի հիմնադիրներէն՝ կենսական դեր խաղաց հայկական ուսումներու համալսարանական մակարդակով հաստատումին մէջ :

«...Բազմատաղանդ [այն] խմբագիրն ու գրողը, որուն կարծիքներն ու հրատարակութիւնները հիմնական եւ կենսականօրէն կարեւոր հարցերու շուրջ՝ հետք ձգեցին ու ձեւաւորեցին միտքերը սփիւռքի բոլոր հայերուն :

«...Տեսլապաշտ [այն] հայրենասէրը, որ հաւատաց մեր հայրենիքի բախտին եւ հայ ժողովուրդի վերապրումին մէջ Հայաստանի կարեւորութեան : Նոյնիսկ երբ երկիրը կը տքար ճնշումի լուծին ներքեւ՝ անիկա թիկունք կանգնեցաւ եզակի այն դերին, զոր Հայաստան կրնար եւ պարտ էր որ խաղար տեւականացումին մէջ հարուստ մեր ժառանգին, անիկա հաւատաց իր հայրենիքի աւելի եւս պայծառ ապագային... :

«...Հայ ժողովուրդի մէջ միացնող [այն] ուժը, որ որպէս առաջնորդ մը Հայ Աւետարանական Եկեղեցիի՝ տուաւ երաշխիքն ու իր կեանքի ընթացքին օրինակ հանդիսացաւ միասնականութեան կարեւորութեան հայ կրօնական ու քաղաքական բոլոր խմբաւորումներու միջեւ :

«...Ու տեսիլքի, հաւատքի, սկզբունքի եւ հեռատեսութեան [այն] մարդը, որուն պատգամն այդքան է այժմէական այսօր՝ որքան որ էր անիկա իր կեանքի օրերուն, եւ որուն օրինակելի կեանքը կը բարձրացնէ զայն ամբոխէն վեր ու կ'ընծայէ զինք ներշնչումի աղբիւր մը մեր բոլորին համար»<sup>(99)</sup> :

Եւ այժմ, ահա՛ւասիկ, այս բոլորէն ետք եթէ ապրէր Վեր-  
Տիգրան ձ. Խրլորեանը՝ տարիով մը իր ետին ձգած պիտի ըլլար Հա-  
րիւրամեակն իր ծննդեան: Եւ եթէ տակաւին ապրէր՝ կեանքի իր օրե-  
րուն վրան աւելցուցած պիտի ըլլար քառորդ դար մը եւս: Արդարեւ՝  
զրեթէ քառորդ դար մը եղաւ անոր անվերադարձ մեկնումին, ու դեռ  
կան մարդեր, որոնք կը յիշեն զինք ի ժամու եւ ի տարաժամու, կը  
յիշեն ու կը խօսին իր մասին՝ մերթ քանի մը բառով, այլ յաճախ սի-  
րով ու գուրգուրանքով, յարգանքով ու երազանքով, եւ բարութեամբ  
ու արութեամբ:

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ



17. Նոյն:
18. Հայկ Պարիկեան — Յովնան Վարժապետեան, *Պատմութիւն Սուրբոյ Հայ Տպարաննորու*, Հալէպ, 1973, էջ 165:
19. Մանրամանութիւններուն համար տես՝ ժիրայր Դանիելեան եւ Մովակ Այրունեան, [*Հայկազեան Գոյճեի Հայադիտական Գրադարանի*] *Հայ Մատույի Հաւաքածոյ*, Մեհնագիր քաղաքընտան, Պէյրութ, 1981, էջ 146:
20. *Նոր Աւետարանի* հայերէն թէ հայատառ թրքերէն քաժիւններու աշխատակիցներուն մէկ ցանկին համար տես՝ Պարիկեան — Վարժապետեան, էջ 165:
21. Տիգրան Ճ. Խրոյրեան, *Բարոյավէպեր*, մատենաշար «Նոր Աւետարան»ի, թիւ 1, Հալէպ, 1931:
22. Յօրինակեան Մարմինը կը բաղկանար Վեր-Վեր-Կարապետ Թիլիքեանէն, Արամ Լատիտեանէն, Տիգրան Ճ. Խրոյրեանէն, Պատուելի Ասատուր Սատապետեանէն եւ Օգոստին Պետրեանէն: Բիշ ետք ասոնց վրայ աւելնալու հրաւիրուեցան Վեր-Վեր-Յովնանէն Արգարեանը եւ Յովնանէն Ահարոնեանը, եւ այդ ձեւով կազմուեցաւ Յօրինակեան Յանձնախումբ մը:
23. Կակնարկուի աստուածաբանական զանազան հաստատութիւններու եւ ճեմարաններու ուսանող հայ երիտասարդներուն:
24. *Հուճեք*, էջ 9-11:
25. Այսինքն՝ Պէյրութի Աստուածաբանական ճեմարաններն ու Արեւմտի Կրօնական Վարժարանը, որոնց համար տես՝ նոյն, էջ 10-33:
26. Վեր-Վեր-Ա. Գ. Միլիտեան, Կ. Թիլիքեան, Մ. Մանկասարեան, Յ. Արգարեան, Յ. Զաքարեան, Կ. Տարանեան, Լ. Համարձումեան, Պատ. Յ. Կիրիլեան, Փրոֆ. Լ. Յ. Լեւոնեան, Տէր. Տ. Ե. Քասունի, ՊՊ. Բիւզանդ Եղիայեան, Ս. Վեցիկեան, Յ. Ահարոնեան, Ժ. Յ. Սարգիսեան, Զ. Իլանեան եւ Բ. Ռուպեան:
27. Բացման խօսքին համար տես՝ *Հուճեք*, էջ 237-238:
28. Տես՝ Տ. Ճ. Խրոյրեան, «Փրոֆ. Լ. Յ. Լեւոնեան մարդը եւ գործը», *Հուճեք*, էջ 223-234:
29. Այս կենսագրականներուն համար տես՝ նոյն, էջ 267-294:
30. Երբեք իմանալու այս խորանը, որ կը բանայ մուտքը գոյգ հատորներուն՝ գործն է Պէյրութի մէջ տպածոյի համարձակութիւնն ու մասնագէտ գործարանատէր Յարութ Պեղեանին, որ յետագային պիտի դառնար երեց փեսան Պատուելիին:
31. Տիգրան Ճ. Խրոյրեան, *Ոսկեմատեան*, հտ. Բ., *Համապատկեր ժամանակակից Հայ Աւետարանական Եկեղեցւոյ*, Պէյրութ, 1951, էջ է: Ասկէ ետք կը նշուի որպէս *Համապատկեր*:
32. Նոյն, էջ է:
33. Շատ հաւանաբար Վեր-Արեւնակ Միսիրեանի գրիչն էլ է:
34. *Համապատկեր ժամանակակից Հայ Աւետարանական Եկեղեցւոյ* գործը կը բաղկանայ ԺԲ + 444 էջերէ, եւ յաւելումով քաժիւն մը (էջ 421-444), ուր գետնդուած են գործին տպագրութեան յանձնուելէն ետք ստացուած կարգ մը նիւթեր Սուրբոյ, Պարսկաստանի, Կիպրոսի, Պոլսոյ եւ Հարաւային Ամերիկայի մասին:
35. «Վահէ-Վահեանի դամբանականը Վեր-Տիգրան Խրոյրեանի ղազաղին առջեւ», *Զարթոճ*, Պէյրութ, 10 Դեկտեմբեր 1968, էջ 2:
36. Ըստ այլ աղբիւրի մը՝ «մանկապարտզը աւարտած է Հալէպ՝ 1898-ին, աշակերտելով Տիլ-Ջալարուիի Յարութիւնեանիի»: Տես՝ *Հուճեք*, էջ 272:
37. Այսինքն՝ Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ Գոյճեին երկրորդականի քաժիւնը:
38. Շրջանաւարտութեան իր դասընկերներն էին Ճեմիլ Ա. Պապիկեանը, Սուրէն Ճեմիլեանը, Սարգիս Լալեանը եւ Երուանդ Գ. Նազարեանը: Տես՝ Գեորգ Ա. Սարափեան, *Պատմութիւն Անթիպի Հայոց*, հտ. Ա., Լոս Անճելըս, 1953, էջ 272:
39. Այլ աղբիւր մը կը նշէ, թէ 1915-1918-ին զինուոր [է եւ] զբաղիւր թարգման զերմանական զինուորական մասնակատները: Տես՝ *Հուճեք*, էջ 272:
40. Ըստ *Հուճեք*ին՝ «Պոյգ Հայ Արուի քարձրագոյն յորս կարգերուն»: Տես՝ նոյն:
41. Վեր-Տիգրան Խրոյրեանի հետ, որ մօրաբոջը մանչն էր մօրեանական մեծ մօրս եւ ինկզիմն կը նկատէր շատ մօտիկ ազգականը մօրս, եւ առ այդ՝ նաեւ իմ՝ առաջին անգամ

- գործայ պաշտօնակից 1952-1953-ի ուսումնական տարեշրջանին. յաջորդ տարեշրջանին՝ վարիչ տնօրէնն էր նոյն հաստատութեան: Ապա՝ կրկին եղանկ պաշտօնակից ու գործակից 1967-էն մինչեւ իր մահը՝ Հայկազեան Գոյէնին մէջ, որ յետագային պիտի վերամկրտուէր Հայկազեան Համալսարանական Գոյէն անունով:
42. *Համապատկեր*, էջ 80-81: Հակիրն այլ կենսագրութեան մը համար տես նաեւ *Հայկական Սովետական Հանրագիտարան*, հտ. 5, Երևան, 1979, էջ 95:
43. Շատ հաւանաբար Դոկտոր-Փրոֆեսոր Գեորգ Տ. Խրոյրեանի գրիչէն ելած:
44. Գուցէ ա՛յս իսկ էր միակ պատճառը, որ Պատուելիին մահուան առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառը փութաց իր հեռագիրով յայտնելու Հայկազեան Գոյէնի Թաղման Յանձնախումբին «Նուրբ էջմիածինէն [Եր] վերջին ողջոյն[ը] եւ օրհնութիւն[ը] Վերապատուելի Խրոյրեանին, որուն պայծառ կեանքը պատարագ մ՛եղաւ վասն Յիսուսի [եւ] վասն հայրենեաց: Թող Տէրը հանգուցեալի հոգին փառաւորէ յանբժի յոյսին մէջ»: Տես՝ «Ճաւակցական հեռագիրներ», *Զարթօնք*, Պէյրուս, 30 Նոյեմբեր 1968, էջ 2:
45. Այժմ՝ էշրեֆիւ, Հայկացի արեւմուտք:
46. Ըստ տուեալներու՝ Գեորգ Ա. Սարափեանի փափաքով եւ իրեն գործակցելու համար Հայկացի եւ Պէյրուսի մէջ կազմուեցան խմբագրական երկու ենթալստանախումբեր, որոնցմէ «Պէյրուսի ենթալստանախումբի անդամներն են. — Վեր. Ս [ղիա] Քասունի՝ ատենագետ, Վեր. Տ [իզրաւ] Խրոյրեան՝ ատենագիր, Պր. Լեւոն Նազարեան՝ զանձնագետ, Պր. Բիւզանդ Թիւրխմենեան՝ խորհրդակց, Պր. Յագուպ Ուսթազարայեան՝ խորհրդակց, [եւ] Պր. Լեւոն Զէնեան՝ բարտուղար»: Տես՝ Սարափեան, էջ 18-ի: Ոչ միայն ա՛յսքան սակայն: Ինձի կը բուի բէ Պատուելիինը չեղաւ դերը յո՛կ ատենագիրի մը ունեցածը: Ընդհակառակը, անկէա դրապէս այ օժանդակեց Վեր. Քասունիին՝ «կազմելու համար իր քաղաքային, [անկէա] օգտագործած է իրեն տրամադրուած ձեռագիր կարգ մը հաւաքածոներ, որոնք իրեն տրամադրուեցան զանազաններու կողմէ:
47. Տես՝ *Ճանաթ*. քիւ 18:
48. Ըրանդ Գանգրունին կը յայտնէ սակայն, որ Պատուելիին նշանաբանն եղաւ «սերունդը ազգին ու հայրենիքին»: Տես՝ *Ճանաթ*. քիւ 7:
49. Սանճագի բոհարոսին ընթացքին՝ Պատուելիին կանոնաւոր կերպով եւ շարքակամ դրութեամբ Հայկացի *Տիբրաս* օրաթերքի էջերէն տեղեկագրեց քաղաքական բոլոր այն խաղերն ու սաղարմները, որոնց որպէս հետեւանք՝ Մուսա Լեւոն արդէն իսկ Հաքայ անուանուելու սկսած պատահիկը պարզուեցաւ իր ժողովուրդէն:
50. Մէկէ աւելի անգամներ տեսած եմ Պատուելիին ափի մեծութեամբ տետրակներու այն շարքը, ուր անկէա արձանագրուած ունէր հայ կեանքը յուզող հանդիպումներու, տեսակցութիւններու եւ ժողովներու տեղեկանքները, եւ գործնէ, ըստ իրեն, պիտի օր մը օգտագործէր պատեհ առիթով մը գրելու համար պատմութիւնը յիշանաւեալ կեանքը փոթորկող ազգային, եկեղեցական, կուսակցական եւ ընկերային տագնապներուն: Պատուելիին մահէն ետք՝ տակաւին անոնք հոն էին՝ իր տան գրադարան-աշխատանոցի դարակներուն մէջ՝ առանց այ երբեք օգտագործուած ըլլալու: Կիրանանեան երկարատեւ տագնապի առաջին շրջանին՝ երբ Միացեալ Նահանգներ մեկնէր էին անդամներն իր ընտանիքին՝ զինեալներ գրաւեցին իր բնակարանը եւ քաղաքի բաններու հետ փնացան նաեւ անոնք, որովհետեւ տունին գրաւումէն մօտ տարի մը ետք միայն ազատագրուած իր գրադարանի գիրքերուն մէջ չկային անոնք, ինչպէս որ չկային տարիներու ընթացքին դասախօսի եւ հետազոտողի իր աշխատանքներուն ընթացքին ճառագրուած իր նօթանոթերը, որոնց բովանդակութիւնը, կ'ըսէր ինք, պիտի օր մը դնէր կարգի ու վերածէր հատորներու:
51. Պատուելիին մահուան առիթով Սփիւռքահայութեան Հեռ Մշակութային Կապի Կոմիտէի անունով Անտրէ Մարտիրոսեան կը գրէր ի միջի այլոց Հայկազեան Գոյէնի նախագահութեան, բէ խոր կակիծով իմացեր էին «Հայկազեան Գոյէնի վաստակաւոր դասախօս, հայրենիքի եւ սփիւռքի կապերու ուժեղացման պաշտպան Փրոֆ. Տիգրան Խրոյրեանի վախճանման գոյժը»: Տես՝ «Ճաւակցական հեռագիրներ», *Զարթօնք*, Պէյրուս, 30 Նոյեմբեր 1968, էջ 2:

52. Յովհաննես Քապանեան կը վկայէ թէ «մերգաղթի տարիները իրեն համար կ'ըլլան երազի մը, փափաքի մը, ակնկալութեան մը, խոստումի մը նուիրագործումը: Կ'ըլլայ փոխնախագահը ներգաղթի Կոմիտէին: Հայ հողին կանչը կը երազուրէ գինձ [եւ] կ'ոգնուորէ...»: Տես՝ *Ճանօթ*, քիւ 11:
53. Համաշխարհային Երկրորդ Պատերազմին՝ Հայաստանի ինքնագաղթականութեան ներքինում հայրենի իշխանութիւններու ճիգին որքան խօսքով՝ նոյնքան նաեւ գործնական կերպով քերաւ իր նպաստը եւ եղաւ Սասունցի Դաւիթ Հրասայրայի Ջորասիւնի ի նպաստ կազմակերպուած համգամակութեան մղիչ ուժերէն մէկը. աւելին՝ հայրենի իրականութիւնը շոշափելի ընծայելու համար հալէպահայութեան՝ «ինքն է որ առաջին անգամ ըլլալով կը կազմակերպէ Հայաստանի տօնակատարութիւնը համազգային մեծ շուէրով»: Տես՝ *Ճանօթ*, քիւ 11:
54. Գուցէ ա յս հաւատամքն էր որ մղեց գինձ իր առջիննկ մանչը՝ Գեորգը. որ այդ օրերուն ընդհանրապէս չօրն էր ինձի եւ մեր դասակիցներուն համար՝ դրկելու հայրենիք, ուր անիկա քայեց դժուարին պայմաններու մէջ՝ քայց քորը ռումանիստներուն վրայէն: Համալսարանի դասախօս եւ իմաստասիրութեան մասնագէտ Դոկտոր-Փրոֆեսոր Գեորգ Խրոյքեանի մասին տես՝ *Նոր Այնթապ*, ԻԴ. տարի, քիւ 13-16 (85-86), Պէյրութ, 1988, էջ 4-36:
55. Պատուելի միշտ ալ հաւատաց հայ մշակոյթի անկորնելի եւ փրկարար ուժին, ու շնչոնց ի ծախու եւ ի տարածախու թէ աներածնոյն էր հայ աւետարանական նոր սերունդին համար դառնալ իր արմատներուն եւ հայանալ աւելի, գործընթաց մը որ բիշ ետէ, 1965-ի Հայ Եղեռնի յիսնամեակի արտայայտութիւնները յառաջացուցին եւ ամբողջուցին: Մինչ այդ սակա՞յն: Պատուելիին գորաւոր եւ անքեկանելի հայամուտիւնն ու հայրենասիրութիւնը որոնք իրեն արժեք էին քանի մը գունաւոր վերադիր՝ մղեցին գինձ, որ 1955-ի վերջին ամիսներուն ռաբի հանէ Հայ Աւետարանական Մեսրոպեան Մշակութային Միութիւնը, եւ անոր միջոցով իր համայնքը հաղորդակից դարձնէ հայութեան արժէքներուն եւ արժանիքներուն:
56. Տես՝ *Ճանօթ*, քիւ 43:
57. Լեւոն Վարդան, «Դամբանականը գոր շխօսեցա՞յ բնաւ», *Սփիւռք*, Պէյրութ, 15 Դեկտեմբեր 1968, էջ 2:
58. Լիբանանահայ մամուլէն *Զարթօնքը* գուծեց Պատուելիին մասը 24 նոյեմբերին, *Արարատն* ու *Ազգակը*՝ 25-ին, *Այզը*՝ 26-ին, իսկ *Սփիւռք* շաբաթաբերը՝ 1 Դեկտեմբեր 1968-ին: Նոյեմբեր 25-ին տեղի ունեցաւ բաղման պաշտամունքը Հայ Աւետարանական Առաջին Եկեղեցին, Մեծսիկ փողոցի մէջ, «ծովածաւալ յորդ բազմութեան մը» ներկայութեան, իսկ նորոգ հանգուցեային ածիւններուն ամփոփումն ու քաղուր կատարուեցան Պէյրութի Տրոն էլ-Տպպեֆի Հայ Աւետարանական Գերբզմանատունը, որոնց ընթացքին աղօթքով, Աստուածաշունչի ընթերցումով, ջարդով եւ սիրտի խօսքով հանդէս եկան առաջնորդներն ու ներկայացուցիչները Լիբանանի եւ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքին եւ Պէյրութի Հայկազեան Գոյէնին, որուն հաստատումն, կազմակերպումն եւ առաջնորդութեան մէջ այնքան նշանակալից դեր էր խաղացած Պատուելին: Հայ Աւետարանական Առաջին Եկեղեցին խոնուած եւ բոլոր համայնքները, կուսակցութիւնները, մշակութային միութիւններն ու կրթական հաստատութիւնները ներկայացնող ժողովուրդին առջեւ «ողբացեային դրուատիքը ըրին Վերապատուելիներ Աքրանաւ Ճիգմեհեան[ը], Յակոբ Սաղըրեան[ը], Հայէպէն Ասատուր Սասագեան[ը], Մեքէ[աւոր] Արեւիլի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Յայտագահ Յովհաննէս Ահարոնեան[ը], համայնքագետ Արամ Հատիտեան[ը] եւ Հայկազեան Գոյէնի նախագահ Տաթ. Ժիլպեր Պիեղիէնեան[ը]», իսկ գերեզմանատան մէջ «դամբանականներ խօսեցան Հայկազեան Գոյէնի ուսուցչական կազմին կողմէ՝ Տիար Խայր Գալուստեան[ը], Ն[րուման] Հիւսիսեան Հայագիտական Հաստատութեան [ընտ՝ Հիմնարկին] եւ Թէէեան Մշակութային Միութեան անունով՝ քանաստեղծ Մանասեղծ Վահէ-Վահեան[ը], Համազգային Մշակութային անունով՝ քանաստեղծ Մ[ուշեղ] Իշխան[ը], Լ. Բ. Ը. Միութեան անունով՝ Տաթ. Տիգրան Վարժապետեան[ը], Այնթապի Հայր[եանկցական] Միութեան անունով՝ Տիար Գրիգոր Պողոսեան[ը], Հայկազեան Գոյէնի ուսանողութեան անունով՝ Պետիկ Գարբունեան[ը], Նոր

Սերունդ Մշակութային Միութեան կողմէ՝ Տիար Հրանդ Գանգրունի[ն] եւ վերջապէս Գրական շրջանակի կողմէ՝ բանաստեղծ Գառնիկ Աղդարեան[ը]»։ Տես՝ *Ժանաթ*, քիւ 6։

- Երբ ասարտեր էր ամէն ինչ՝ անդարձ մեկնողին մասին յօդուածներ ստորագրեցին *Արարատ* օրաթերքի 7 Դեկտեմբեր 1968 համարին մէջ Հրանդ Գանգրունին («Վերապատուելի Տ. Խրյոբեանի մահուան առթիւ»), *Զարթօնք* օրաթերքի 26 Նոյեմբերի քիւիին մէջ՝ Վ. Կեսարացին («Մահ եւ բարում Վեր. Տ. Խրյոբեանի»), *Այգի* 27 Նոյեմբերի քիւիին մէջ՝ Ծահանդուխտը («Վերջին յարգամբ Վեր. Տիգրան Յ. Խրյոբեանի»), *Զանաւէրի* 21-22 համարին մէջ՝ Մանատ Ծնորեօբեանը («Հանգիստ Վեր. Տիգրան Խրյոբեանի»), եւ *Սփիւոք* շաբաթաթերքի 15 Դեկտեմբերի քիւիին մէջ՝ Լեւոն Վարդանը («Իմաստակամը գոր յիօսեցա՛յ բնաւ»)։ *Ազգակ* օրաթերքի խմբագրութիւնը իր 26 Նոյեմբերի քիւով բաւականացաւ միայն կարճ, շատ կարճ գրութեամբ մը («Վեր. Տիգրան Խրյոբեանի յուղարկաւորութիւնը»), իսկ *Զարթօնք* օրաթերքն իր Նոյեմբեր 28-ի, եւ Դեկտեմբեր 7-ի, 10-ի, 12-ի եւ 13-ի համարներով յաջորդաբար տուաւ դամբանականները Յովհաննէս Թապաւեանին («Վեր. Տիգրան Խրյոբեան»), Վեր. Յովհաննէս Անարոնեանին («Վեր. Յովհաննէս Անարոնեանի դամբանականը Վեր. Տիգրան Խրյոբեանի դագաղին առջեւ»), Վահէ-Վահեանին («Վահէ-Վահեանի դամբանականը Վեր. Տիգրան Խրյոբեանի դագաղին առջեւ»), Խաչեր Գալուստեանին («Պր. Խաչեր Գալուստեանի դամբանականը Վեր. Տիգրան Խրյոբեանի դագաղին առջեւ») եւ Գրիգոր Պողարեանին («Պր. Գրիգոր Պողարեանի դամբանականը Վեր. Տիգրան Խրյոբեանի դագաղին առջեւ»)։ Այս վերջինը, սակայն, բաւական ընդարձակ կենսագրականով մը յոյս տեսաւ նաեւ *Հայ Աւթէպի* 1969-ի քիւ 33-34 միացեալ համարին մէջ։ Մինչ երբ 1 Դեկտեմբերի քիւով *Սփիւոք* կը գուժէր մահը Վերապատուելիին՝ կը յայտնէր թէ «պիտի անդրադառնամ»։ Դժբախտաբար չկատարուեցաւ այդ անդրադարձումը։
59. Այժմ յայտնի չէ, թէ որո՞նք էին անդամները այդ յանձնաժողովին։ Յստակ է, սակայն, որ երատարակական գործ մը իրագործելու համար Գուլեմին նախագահը չէր որ պիտի գլուխը կենար անոր։ Ի դէպ՝ ա՛յ ժամանակն է, որ Մերձաւոր Արեւելիի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւնը, Հայկազեան Համալսարանական Գուլեմի Հայագիտական Ուսմանց Կեդրոնը եւ Հայ Աւետարանական Հիմնարկը մտածեն հատորի մը կամ հատորներու գույգ մը կողմերուն միջեւ ամփոփելու Վեր. Տիգրան Խրյոբեանի մամուլի էջերուն մէջ ցրուած յօդուածներն ու սերտողութիւնները, որոնք անպայման շահ մը պիտի ըլլան լիբանանահայ գիրին ու գրականութեան եւ մանաւանդ Հայ Աւետարանականութեան պատմութեան, գաղափարախօսութեան եւ դիմագիծի յստակացումին։
60. «Կոչ՝ Վեր. Տիգրան Յ. Խրյոբեանի Յիշատակի Յանձնաժողովի», *Զարթօնք*, Պէյրուք, 27 Դեկտեմբեր 1968, էջ 3։
61. Rev. Movses B. Janbazian, «In loving memory of the Rev. Dikran G. Kherlopian», Paramus, 22 November 1991.
62. Նամակ՝ Դուկո՝ Բերկրուիի Սվանեանէն Փրոֆ. Գեորգ Խրյոբեանին, Սէտլ Պրուք, Նիւ Ճըրզի, 18 Նոյեմբեր 1991։
63. Նամակ՝ Տոքթ. Գեորգ Քէշիշեանէն Հենրի Ազանեանին, Ուոքըրթաուն, 20 Նոյեմբեր 1991։
64. Նոյն։
65. Letter, Dennis R. Papazian to Dr. Garbis Der Yeghiayan, Dearborn, 13 November 1991.
66. Ըսել կ'ուզուի՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն։
67. Letter, Manoog S. Young to the Centennial Celebration [Committee] of Rev. Dickran G. Kherlopian, New York, 24 November 1991.
68. Տես՝ *Ժանաթ*, քիւ 78։
69. «The American Armenian International College proudly salutes...», [Garbis Der Yeghiayan to the Centennial Celebration Committee of Rev. Dickran G. Kherlopian], La Verne, 24 November 1991.

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ

## REV. DICKRAN G. KHERLOPIAN

(1891 - 1968)

### SUMMARY

LEVON VARTAN

On the occasion of the centennial of Rev. Dickran G. Kherlopian, the author of this article endeavours to give an appraisal of the man, the religious leader, the teacher and professor, the Armenologist and one of the founders of the Haigazian College of Beirut and its Armenological Library. He meticulously examines the course of the life and deeds, the periodicals the Reverend edited and published, the books he authored, and the cultural and Armenological work he carried both at the Haigazian College, schools and churches, and various cities and towns in the Middle East, especially in Syria and Lebanon.

Heavily documented, the study is a homage from a close collaborator and colleague of the Reverend to the memory of the man Rev. Dickran Kherlopian was.